ՀՐԱՐԱՏ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ,

ԲԱՐՈՑԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՑԻՆ.

ԹԻՒ Գ. ՏԱՐԻ Ի. ՄԱՐՏ 31

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.

ԿՐՕՆԱԿԱՆ. Մարդոց արած դատողութիւնն ու դատաստանը. (Քարգմ.
Գ. Ե. Ա. 97
Ազոռ Հայաստանեայց. (շարունակ.) Մաղաքիա եպիսկոպոս Օրմանեան 104
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Պատրաստուող սերնդի առողջապահութիւնը. (շարունակ. Ե. Բ.). Մ. Տ. Ս. 124
ԲԱՐՈՑԱԿԱՆ. Հազար ռսկի. (Ռուսերէնից). 134
Աստուեն միայն. (բանաստ.) Ներ. Տ. Աւե. 135
ԱԶԳ ԵՒ ԱԶԳԱՑ. 137
ՊԱՇՏՕՆԱԿԱՆ. Դիւան վեհ. կաթուղիկոսի. 140
ՎԱՐՉԱԿԱՆ. յօրագրութեանց սինօդի 141
Յայտարարութիւններ 142
Մաճագոյժ. 143

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ.

ՌՃԼԷ—1887

ՅՈՒՅԱԿ ՎԱՃԱՌԵԼԻ ՄԱՏԵՆԻՑ·

ԳՐԱՏԱՆ ՏՊԱՐԱՆԻ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ.

	Ր.	Կ.
Այրիվանք կամ Գեղարդավանք	—	20
Աստուածպաշտութիւն Հայաստանեայց եկեղեցւոյ	—	70
Արարատ Ամենագիր տարեկան ամբողջ կազմեալ	2	—
Աւետարան Համաբարբառ վկայութեամբ	—	80
Բենիամին Գրանկլինի կեանքը	—	30
Գիրք Հանդիսակատարութեանց կայսերական տօնից	—	50
* Գոթոդիա ողբերգութիւն	1	—
Դատաստանագիրք Հայոց Մխիթար Գօշի	3	—
Դաշնագիր	—	15
Դասագիրք բաղդատական Աշխարհագրութեան	1	—
Դասագիրք Ընդհանուր պատմութեան.—Հին դարուց	1	—
Նոյն.—Միջին դարուց	1	—
Դասագիրք Քրիստոնէական Հաւատոյ· Արքէլ Եպիսկոպոսի	—	20
Դասագիրք Քրիստ· վարդապետութեան Գ. Ե. Այվազեան	—	40
Դպրոց տարեկան 1874—76	2	—
* Եօթն խօսք առ տղայս	—	20
* Թուաբանութիւն զարգացելոյ Ա. Գալֆայեան	1	—
* Ժամագիրք ատենի	8	—
Ժամագիրք ձեռաց	2	—
* Լաթան Աւագ ուրբաթ	—	10
* » Առումն Կ. Պոլսոյ	—	10
* » Արև	—	10
* » Զատիկ տեառն	—	10
* » Երկինք և երկնայինք	—	10
* » Հռիփսիմէ	—	10
* » Հնութիւնք Եգիպտոսի	—	10
* » Մեծն Ներսէս	—	10
* » Ս. Խաչ	—	10
* » Տօն Ծննդեան	—	10
* Խանգարմունք Հայկաբանութեան	—	50
Կաթուղիկէ մայր եկեղեցի Վաղարշապատայ	—	50
Կանոն աշակերտաց Գէորգեան Ճեմարանի	—	10
Կանոն ընկերութեան Հայոց Ճաւայի	—	10
Կանոն Ծխական Դպրոցաց	—	20
Հանդէս Դ. տարեգարձի Գէորգեան Ճեմարանի	—	10

Ա Ր Ա Ր Ա Տ

Թիւ Գ. — ՇՐՋԱՆ Ի. **1887** ՏԱՐԻ Ի. ՄԱՐՏ 31.

ԿՐՕՆԱԿԱՆ

ՄԱՐԴՈՑ ԱՐԱՔ ԴԱՏՈՂՈՒԹԻՒՆՆ ՈՒ ԴԱՏԱՍՏԱՆԸ։

(Քաղուածոյ ընտիր կտորներ Գաղղիացի Մասսիլիոն անուն կլէրմոնի եպիսկոպոսի քարոզներից)։

Ի՛նչ դրութեան ու դիրքի մէջ ուզումենք՝ մեզ դնենք, օրինաւոր մարդ լինինք, կամ զուարճութեան համար ապրող պատ ընտրենք, կամ քաշուած կեանք. իբրև փիլիսոփայ՝ բանականութեան համաձայն՝ ապրենք, կամ իբրև անառակ մարդիկ. ոչ մի ժամանակ մեր վարքին միաձայն հաւանողներ միայն չեն լինիլ, ոչ էլ նորանց ամենի կարծիքը անշուշտ նպաստաւոր կլինի մեզ համար։ Այստեղ տեսնուումենք մի մարդ, որ իսկ մարդ է. աղնուամիտ բարեկամ է. այնպիսի մի պատերազմական է, որ իւր քաջասրտութիւնովն ուրիշներից գերազանց է, անխորտակ ու անշահասէր պալատական է, բարեմասնութիւններով զարդարուած ու լուսաւորեալ անձն. այնտեղ տեսնում

ենք, որ մի և նոյն մարդուն, ասեմ մեզ, մեղադրում են անհաւատարմութեան մէջ, մեր ունեցած մեծ ձիրքերի մեր արած նշանաւոր ծառայութիւնների փոյլն ու արժէքը մեզ հետ միասին նուաստացնում են, մեզ հասարակ մարդոց կարգն են դասում, մեզ վերայ յօրինում են սուտ՝ թէ մենք ծածուկ սիրոյ կապեր, բարեկամութիւններ ունենք, ուր մեր ունեցած փառքին անարժան թուլութիւններ, պակասութիւններ են ընծայում։

Մեր ամեն մի դիրքի մէջ փորձենք ու տեսնենք թէ՝ կարո՞ղ ենք արդեօք այնտեղ հասնել, որ ամեն մարդիկ միաբերան նպաստաւոր կերպով խօսին մեր ունեցած անուան ու մեր վարքի վերայ։ Եռանդը, ներողամտութիւնը, հասարակ կեանք վարելը, քաշուած ապրելը, մեծ տեղերից հեռու փախչելն, և նոյն իսկ մեծ տեղերն, մեր ամեն այս ու այսպիսի յատկութիւնները ու տրամադրութիւնները՝ ունին իրանց քննողները, չհաւանողներն ու պախարակողներն։ Այնպէս անենք, եթէ կարող ենք, որ բոլոր մարդիկ մեր անձի վերայ համաձայն կարծիք ու համարումն ունենան, այն ժամանակ մեզ կթոյլատրեն այդ՝ անշուշտ այն մրցքով, որ իրանց ունայն կարծիքը՝ մեր վարքի կանոնը լինի։ Մենք միշտ չհաւանելու անձինք ենք և անհաճոյ ենք լինում մարդոց այն կողմերով, ինչ կողմերով որ կարողացել ենք ուրիշներին հաւանելի ու հաճոյ լինելու։ Մարդիկն իրանց հետ չէին կարող համաձայնել ու համամիտ լինել մեր ունեցած յատկութեանց, կամ արժանեաց մասին նորա համար, որ իրանց դատողութիւնների կանոնն իրանց կրքերն են, ու կրքերն՝ այլ և այլ մարդոց մէջ՝ տարբեր են։

Մի բարի սիրտ, մի ուղիղ սիրտ, մի պարզ ու անկեղծ սիրտ գրեթէ չէ կարող հասկանալ թէ՝ ինչպէս կարող են լինել աշխարհիս վերայ չարաճոս ու ստահոս մարդիկ։ Նա իւր սրտի գանձի մէջն է գտնում բոլոր ուրիշ մարդոց ջատագովութիւնն և այն՝ իւր չափովն է չափում՝ թէ ինչ նշանակութիւն ու արժէք կունենար իւր համար ուղիղ սրտի տէր մարդ չլինելն, ուրեմն և ինչ գին պիտի ունենայ ուրիշների աչքում։ Բայց և քննենք այն մարդոց, որ սարսափելի անիրաւ ու անմիտ կասկածներ են անում ուղիղ սրտի տէր մարդոց վերայ, ու կգտնենք որ, նորանց վերայ այդպիսի վատ կարծիքներ անողներն

անկարգ ու վչացած մարդիկ են, որ ուզում են իրանց անպարկեշտ վարքի կողմանէ իրանց սիրտը հանդարտեցնել, հանգստացնել այն ենթադրութիւնով թէ՝ իրանց ունեցած թուլութիւններն ամեն մարդիկ էլ ունին. թէ նորանք, որոնք որ աւելի առաքինի են երևում, նոքա են, որ աւելի վարպետ կերպով ծածկել գիտեն իրանց արածն, և եթէ մարդ նորանց աւելի մօտիկ ճանաչէր ու նորանց վերայ մօտիկից մտիկ տար, կտեսնէր, որ նոքա իսկ և իսկ նոյնն են, ինչ որ ուրիշ ամեն մարդիկ: Իրանց այս և այսպիսի մտածմունքը մի նպաստաւոր բան են շինում իրանց անառակ կեանքի համար, ու հաստատվում իրանց անկարգ վարքի մէջ, ընկերացնելով իրանց հետ այն ամեն մարդոց, որոնց որ հասարակ ժողովրդի միամտութիւնն ու դիւրահաւանութիւնն օրինաւոր մարդ է համարում: Մի սոսկալի գաղափար են կազմում այդպիսի վատաբարոյ ու չարահոգի անձինք մարդկային ազգի վերայ, որ աւելի քիչ սարսափեն այն գաղափարից, որ ստիպուած են իրանք իրանց վերայ ունենալ. և աշխատում են իրանք իրանց համոզելու թէ՝ առաքինութիւն ասած բանդ ամենևին չկայ. և այդ անում են նորա համար, որ աւելի հասարակ, աւելի սովորական բան դարձած ու ամեն տեղ տարածուած յանցանքն աւելի ներելի բան երևի իրանց:

Միշտ խելք չհասցնելու աշխարհս, ամեն ժամինակ միակերպ ամօթ բան է համարել թէ՛ յանցանքն և թէ՛ առաքինութիւնը: Մխծաղելի բան է համարում մարդու արդար ու անբիծ լինելը, բայց և հազար ու մի կերպ խոց ու վէրք դնում անառակ մարդու սրտին: Անգոնեելի կրքերն ու սուրբ գործերը նոյն նիւթն են տալիս իրան ծաղրելու և քննադատելու, և մի օտարոտի այլանդակութիւնով, որ իւր հաճոյքը միայն կարող է արդարացնել, գտել է նա գաղտնիքը միևնոյն ժամանակ և՛ յանցանքն պախարակելու, ատելի անելու, և՛ առաքինութիւնը ծաղրելու:

Ջուր են արհամարհում մարդոց, որովհետև ինչքան էլ որ արհամարհեն, բայց և այնպէս ուզում են, որ իրանց պատուեն մինչև անգամ նորանք, որոնց որ իրանք մարդու տեղ չեն դնում: Ինչքան էլ ուզում են՝ թող բարձր լինին ուրիշներից. բարձր լինելով, աւելի ենք ընկնում բազմութեան աչքին, ա-

ւելի են մեզ դիտում և աւելի ենք նորանց խօսակցութեան առարկան դառնում. և աւելի զգալի է լինում մեզ համար այն մարդոց բամբասանքն, որոնցից միայն պատիւ ու մեծարանք պիտի տեսնէինք, ինչքան էլ որ հաճոյ և ընդունելի լինին ու վայելեն հառաբակաց սէրն ու հաւանութիւնն նորանց արհամարհանքն էլ նոյնչափ կծու է, որչափ որ սովորական չէ և քիչ է պատահում։ Ոքքան էլ որ վրէժխնդիր լինինք մեզ վերայ եղած անարդար ու մեզ վիրաւորող խօսքերի համար, աւելի սիրտ ծակող և աւելի կծու խօսքեր հասցնելով տեղը՝ մեզ վերայ լսածների դէմը, վրէժխնդրութիւնը միշտ ենթադրում է ոխ ու տխրութիւն, և միւս կողմից՝ ամենևին այնչափ ուրախութիւն ու սրտի գոհութիւն չենք զգում արհամարհանքի տեղ արհամարհանք վոխարինելով, քան թէ որչափ որ տխրութիւն ենք զգացել։

Ամեն մոլորութիւններից ու յանցանքներից, որ այսօրուան օրս ընթացք ու տեղ ունին աշխարհիս մէջ, աւելի տարափոխիկն ու աւելի վնասակարն է այն մոլորութիւնն, որ յանցանքի մէջ մի քիչ փառք էլ է տեսնում և առաքինութեան մէջ՝ մի տեսակ ամօթ։ Ամբարշտութիւնն ու չարահաւանութիւնը, չնայելով մարդկային աւերուած սրտի անկարգութեանը, դեռ ևս չէ կարողացել մեր մէջ մի հրապարակական պաշտպանութիւն գտնել։ Հազարից մէկ են տեսնվում երեսները պատուած մարդիկ, որ իրանց համար պատիւ համարեն իրանց ամօթալի վարքն ու գործն, և իրանց վատ անուն ունենալն՝ իրանց համար փառք ու պարծանք։ Յանցանքից անբաժան է մի տեսակ անպատուութիւն, մի տեսակ խայտառակութիւն, որ ամեն մի մարդ աշխատում է ծածկել բազմութեան աչքից. և ես չեմ իմանում թէ՝ սրտի ինչ ուղղութեան հպատակելով, աշխարհս ինքն էլ չէ կարողանում իրան արգելել, որ հրապարակաւ չդատապարտի այն պարսաւելի գործն, որ իւր ապականած սրտովն իրաւունք է տալիս անելու։

Մարդիկ գրեթէ միշտ չկամ են. չեն ուզում, որ ունեցած լինենք այն ամենայն, ինչ որ ճշմարտութիւնը, կամ աշխարհիս ունայնութիւնը մեզ վերագրում է։ Եթէ մեծ անուն ունինք, ասում են թէ՝ իրանցը չէ, այլ իրանց պաշտօներին պիտի ողորմի տան, որ իրանց համար անուն են թողել։

եթէ անյաջող ենք գտնվում, կամ ձախորդութիւն է հանդիպում՝ ասում են թէ բանից հասկացողութիւն չունի, յարմարութիւն չունի, անհմուտ է. եթէ յաջողակ ենք, ասում են թէ՝ պատիւն իրանը չէ, պատահմունքին թող շնորհակալ լինի, կամ թէ իւր ձեռքի տակի մարդոց, եթէ մենք մի համաբոում ու համբաւ ունինք ամենի առաջ, ասում են թէ՝ մեր ունեցած անունը խելօք մարդոց աչքում նշանակութիւն չունի, որովհետև անհասկացող հասարակ ժողովրդի իւր համար կազմած սխալ մի գաղափարն է. եթէ մենք ունինք ամեն ձիրքերը հաւանելի լինելու և մեզ հաւանում են, ասում են թէ՝ մենք գիտենք կերպը մեր ունեցած ձիրքը բանեցնելու և թէ միշտ շատ համոյանալ ունինք, որ մեզ շատ հաւանում են. եթէ մեր վարքն անբասիր է, մեզ վերայ կեղտ կպցնել չեն կարողանում, մեր բնաւորութիւնը կծու կերպով ծաղրում են, վերջապէս, ով էլ լինինք, մեծ ոմն՝ թէ հասարակ մի մեռրդ, թագաւոր՝ թէ հպատակ, մեր ունայն կեանքի համար ամենից աւելի ցանկալին է մեզ այնպէս պահելն, որ չիմանանք թէ աշխարհը մեզ վերայ ինչ է մտածում կամ ինչ է խօսում: Նոյն կրքերն, որ մեզ միաւորում են, նոյն կրքերն էլ մեզ բաժանում են. նախանձը՝ մեր ամենագովելի յատկութիւնները մեզ հետ միասին՝ սևացնում է. և մեր վարած փափուկ կեանքն ունի իւր չհաւանողներն ու քամահաւղները մեզ՝ նոյն իսկ այն մարդոց կողմանէ, որ մեզանից յետ չեն մնում:

Եթէ մարդոց մեզ վերայ ինչ մտածելուն ուշ ենք դնում ու նորանց գատողութիւնը մեր մասին շատ մեծ բանի տեղ քցում, այն ժամանակ մենք, կարծես, միայն ուրիշների համար ենք ապրած լինում: Ինչ որ մենք ենք մեր աչքումը, մեզ համար բանի տեղ չէ. մեր սիրտն անհանգիստ է երևում, ու մեր խելքն ու միտքը տուած ենք լինում իմանալու թէ՝ ուրիշների աչքումն ինչ ենք. ու մեր ուշ ու միտքն այն բանի մէջն է միայն, որով աշխատում ենք գեղեցկացնել այն մոռի գաղափարն, որ ուրիշները մեր մասին ունին: Հազիւ թէ պատահում է, որ մենք ինքներս մեզ հարցնենք թէ՝ ինչ ենք մենք իսկապէս. բայց անդադար ինքներս մեզ հարցնում ենք թէ՝ ինչ են կարծում ուրիշները՝ թէ մենք ենք. այսպէս մեր բոլոր կեանքն երևակայական է, կարծիքական ու կեղծ: Մինչև ան-

գամ շողոքորթում է մեր մեծամիտ անձնասիրութիւնն ու սնապարծութիւնն այն սխալ համարումն, որ ունինն մեր վերայ, ու ինչ որ մենք իրօք չենք։ Մենք թողնում ենք, որ մեր սիրտը շարժի այն մեզ տուած գովեստներից, որոնց որ մենք մեզ արժանի չենք տեսնում ու ինքներս չենք ընդունում, մեզ պատիւ ենք համարում ուրիշների մեզ արհամարհելն. և աւելի դիւր է գալի մեզ, որ մարդիկ, սխալուելով, տուտ առաքինութիւններ են մեզ ընծայում ու որ մենք չենք նուաստանում ճշմարտութեան առաջ, որ մեզ զգացնում է մեր պակասութիւններն ու մեր իսկական թշուառութիւնն։

Կան աստղի պակասութիւններ ու մեղքեր, շատ բաղդաւոր կերպով անցկացող անկարգութիւններ, շատ վարպետ ու քաղաքավարի կերպով ծածկած յանցանքներ, որոց աշխարհս, համարձակութիւն չլինի ասելն, պատուաւոր տեղ է տալիս առաքինութեանց կարգումն, և որոնք որ իսկոյն ցոյց չտալով որ և իցէ շատ մեծ սև բիծ, աչքի չընկնելով իբրև մեծ յանցանք, իբրև վրդովեցնող մի վատ գործ, պահում են յանցանքի բոլոր չարիքն, առանց պահել կարողանալու ամօթալի ու զարհուրելի գործն։ Արդ՝ այս սխալ գաղափար ունենալովն է, որ մարդիկ սիրով յարում են իրանց կարծած առաքինութեանցն, որ բոլորովին իսկական յանցանքներ են միայն. այդ սխալ գաղափար ունենալովն է, որ պատահում է մեզ շատ գործեր անել՝ առանց լսելու մեր խղճմտանքի ծածուկ ձայնին, ու որ զանց ենք անում բոլորովին ուրիշ գործեր ունենալն, որոնց կարեւորութիւնը մեր սրտի, մեր հոգւոյ մէջ զգում ենք, ինչ էլ որ անում ենք, բոլորը նորա համար է, որ մարդոյ առաջը մեր պատիւը չկորցնենք, մեզանից չզզուեն ու իրանց հեռու չպահեն։ Է՛հ, միթէ բաւական չէր, որ մարդկային սրտի թուլութիւնն ու փչացած լինելն՝ առաքինութիւնը մեզ համար ծանր ու ձանձրալի մի բան է դարձրել, պէտք էր արդեօք, որ մեր՝ իւր ճանապարհը ծռած ու անկարգացած սիրտը՝ դեռ մի տեսակ ամօթ ու արհամարհանք էլ վրան կպցնէր։

Աշխարհս, որ մեզ իրաւունք է տալիս այն ամեն բանին, ինչ որ տանում է անկարգ ու անվայել գործի, միշտ ամօթերես է թողնում նոյն իսկ անկարգ ու անվայել բան բռնողին։ Հաւանում է, ընդունում է, արդարացնում է մարդուս սիրտը փչացնող

սկզբունքը, սովորութիւնները ու զուարճութիւնները, բայց և ուշադիր է, որ մարդս բարքի անմեղութիւնն ու բարոյական կանոնների ճիշտ պահպանութիւնը միայնի սրտի ապականութեան հետ։ Ինքն է թելադրում մեզ անմաքուր մտքեր, ինքն է շարժում մեր բոլոր կրքերն ու ինքն էլ պախարակում կրքի բոլոր հետևանքները։ Ուշադիր է, որ մարդս իրան սովրեցնի, տեղեակ ու վրէժինդիր լինի, թէ ինչպէս պէտք մարդոց դիւր գայ ու հաւանելի լինի, և մեզ անարգ մարդ է համարում ու արհամարհում, երբ որ կարողանում ենք չայրող կերպով նորա ուզածն անել ու լինիլ։ Նորա անհամեստ թատրոնները թրնդումեն անգոանելի սիրոյ անմիտ գովեստներ արտայայտող աղաղակների արձագանքներովն, ու նորա խօսակցութիւնները են մարդուս սրտից՝ արիւն միայն բերող, անողորմ երգիծաբանութիւնները նորանց մասին, որոնք որ իրանց տալիս են այնպիսի վատ հակումների, գովում գրաւիչ շնորհքը, գեղեցկութիւնը, թշուառ ձիրքն, որ անմաքուր կրակ են վառում մեր սրտերի մէջ, և անջնջելի, անմոռանալի ամօթանքի մէջ քցում ու խայտառակում նորանց, որոնք որ երևում են թէ այդ անմաքուր կրակովն այրվում են։

Ա՛յն մարդիկն, որոնց սիրտն որ վչացրել են վատ կրքերն, ընդունակ են ամեն կեղծաւորութեան, երկդիմութեան ու նուաստութեան։ Որովհետև նորանք ոչ մի ուղիղ, ոչ մի ազնիւ, ոչ մի անկեղծ գործի հետ բան չունեին, շատ հեշտ կասկած են տանում ուրիշների վերայ թէ՝ նրանք էլ իրանց պէս են։ Չեն կարող հաւատալ, որ դեռ և աս աշխարհիս երեսում պարզ, անկեղծ սրտի տէր ու մեծահոգի մարդիկ կան. նորանք կարծում են թէ՝ ամեն տեղ նոյնպիսի մարդիկ են տեսնում, ինչպէս որ իրանց են ճանաչում իրանց սրտում։ Նորանք չեն կարողանում հասկանալ թէ պատիւ, հաւատարմութիւն, անկեղծութիւն և ուրիշ շատ առաքինութիւններ, որ իրանց սրտում իրօք միշտ չկայ ու միշտ կեղծում են միայն՝ թէ ունեին, չեն կարողանում, ասում եմ, իրանց խելքին տեղ անել՝ թէ՝ այս առաքինութիւնները կարող են մի աւելի ճշմարիտ և աւելի իրական բան լինել ուրիշ մարդոց սրտում։ Ա՛յս է այժմեան ծուռ ուղղութեան դժբաղդութիւնը մինչև անգամ թագաւորական պալատներումը։ Որովհետև այս վիճակի մէջ են ծնուած, և այս

կեղծ վիճակի մէջ էլ ապրում են, կեղծիք են տեսնում որպէս առաքինութեան, նոյնպէս և մոլութեան մէջ։ Եւ որովհետև այսպիսի վիճակն մի բեմ է մեզ ներկայացնում, ուր ամեն մի մարդ փոխ առած դեր է կատարում ու մի կեղծ անձնաւորութիւն ձևացնում, կարծում են թէ՝ ուղիղ սրտի տէր մարդն էլ միայն ձևացնում է մի առաքինի մարդու, նորանոյ գաղափարով՝ հազուագիւտ, կամ անօգուտ անկեղծութիւնն՝ այս բանոյ վիճակի մէջ՝ միշտ անկարելի մի բան է երևում։

Թ՛ոքգ. գապղէնճեանի Գրիգոր Եպիսկոպոս Աղաթիրեան։

ԱԹՈՌ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑ։

(Շարունակ. Սեպտեմ. Ր. Բ.)։

Գ։

ԱՔՈՂՔ ՀԱՑՈՑ ԵՒ ԱՔՈՂՔ ՀԱՒՈՂՄԱՑ։

Նոքա որ չեն ընդունիր որ նախնեաց սովորութիւնն և առաքելական հաստատութիւնն Հայաստանեայց աթոռոյն ինքնագլխութեան բնական պատճառներն լինին, ինչպէս որ այդ պատճառներն արժած են ուրիշ պատրիարքական կամ Կաթողիկոսական աթոռոց Համար, նոր պատճառ մըն ալ կստեղծեն, որ է Հռովմայ աթոռոյն կողմանէ առատաձեռնուած պարգևն շնորհում մը։

Այդ կարծիքը առջև բերողներ պարտաւոր են ամէն բանէ յառաջ բացատրել և ապացուցանել թէ ինչպէս եղած է որ այնպիսի մի ժամանակ երբ Հռովմայ աթոռոյն ձեռներէցութեան և ազդեցութեան չափերը դեռ շատ նուազած էին, երբ արևելից մեծամեծ աթոռք խստիւ և ճշտիւ կը պաշտպանէին և կարող էին պաշտպանել իրենց իրաւունքները, երբ նախնեաց հնաւանդ սովորութիւնք իրենց սեպհական ազդեցութիւնը կը պահէին, երբ եկեղեցական կանոնք խստիւ կը արգելէին որ ոչ մեծ և ոչ փոքր վիճակաց եպիսկոպոսունք ուրիշ վիճակներու կառավարութեանց և ձեռնադրութեանց չմիջամտեն, ինչպէս եղած է կըսեմք, որ այդպիսի մի ժամանակ Հռովմայ եպիսկոպոսունք կարող եղած են առնուլ կեսարիոյ կամ Անտիոքայ

աթոռոց ձեռքէն իրենց սեփհական նահանգներէն մին, և այնպիսի մի նահանգ որ պատրիարքութեան կամ եքսարքութեան մը կը հաւասարի։ Պէտք է բացատրեն թէ ինչպէս Հռոմայ եկեղեցական կրցած են գայդ ընել առանց կանխաւ կեսարիոյ կամ Անտիոքայ եպիսկոպոսաց հաւանութիւնը ընդունելու, առանց այդպիսի փոփոխութիւնը վաւերացնող մի որոշման կամ կանոնադրութեան դիմելու, և առանց պատմութեան մէջ այդպիսի մի նշանաւոր գործողութեան հետքը թողլու։ Եթէ ձրի և առանց փաստից առաջարկեալ կարծիքները հնար է նոյնչափ դիւրութեամբ ձրիապէս մերժել, որպէս ձրիապէս կընդունուին, Հայաստանեայց Կաթուղիկոսութեան Հռոմայ աթոռոյն կողմանէ հաստատութիւնը շատ դիւրաւ կրմերժուի։ Իսկ եթէ ըսեն որ Ս. Սեղբեստրոս Հռոմայ հայրապետն Հայոց կաթուղիկոսական իշխանութիւն տալով քնաւ մէկու մը իրաւանց չէ դպած, այլ միայն ճանչցած և հաստատած է Հայոց աթոռոյն բնական ինքնագլխութիւնը, այն ատեն հարկ կըլինի ընորհման և բարեհաճութեան և պարգևման խօսքերը մէջտեղէ վերցնել, և խոստովանիլ թէ Հայոց աթոռոյն ինքնագլխութիւնը կամ ազատութիւնը նախնական և սկզբնական բան մի է, և Հռոմայ աթոռոյն ըրածը շնորհել չէ այլ ճանչնալ, ինքնագլխութեան պատճառը չէ այլ հետեւանքն է, վերջապէս եղածը ընդունել է և ոչ թէ ի նորուստ բան մը սահմանել։

Հռոմայ կողմանէ եղած շնորհման պաշտպանք պարտաւոր են և ա՛ս մեզ բացատրել թէ ինչո՛ւ Հայաստանեայց կաթուղիկոսութեան աթոռը կըկոչուի Աթոռ Սրբոց Առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի, ինչպէս Հռոմայ աթոռն ալ կըկոչուի աթոռ Սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, եթէ այդ Առաքեալք քնաւ մաս չունին նոյն աթոռոյն հիմնարկութեան և հաստատութեան մէջ։ Ա՛յս մասին թող բաւական լինին կեսարիոյ արքեպիսկոպոսին Ս. Պասիլիոսի վկայութիւնը, զոր անգամ մը յիշեցինք, որ կըգրէ առ Ս. Լուսաւորիչ. «Դուք ընտ«րեցար ի տեղի ընտրելոց Սրբոց առաքելոցն Բարդուղիմէոսի «և Թադէոսի.» և Հայոց եկեղեցին ալ շարունակ պատարագի մէջ կըյիշատակէ. «Առաջնորդացն մերոց և առաջին Լուսա«ւորչացն սրբոց Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոց և

«Գրիգորի Լուսաւորչին»։ Մեծին Ներսիսի վարուց հեղինակն ալ երբ կըպատմէ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն առնելու սովորութեան վերջանալը, իբր միակ և հիմնական պատճառ առաքելական հաստատութիւնը կը յիշատակէ. «Ըստ սմին սա-
«կի ապա և մերն Թագաւոր Արշակ և նախարարութիւնք Հա-
«յոց համարձակութիւն առեալ կացուցին ի պատրիարքու-
«թիւն տանս Թորգոմայ զՄեծն Ներսէս, փաստս իրաւախոհս ի
«մէջ առեալ զսուրբ Առաքեալսն մեր զԲարդուղիմէոս և զԹա-
«դէոս, որք Աքայանազեանս ազին վճճակեցան ի Տեառնէ քա-
«րոզք և աւետարանիչք, և նշխարեալ ոսկերք նոցա կան ի
«մէջի մերում, զորոց և զաթոռն իսկ ընկալաւ կենդանի մար-
«տիրոսն Գրիգոր»։ (Սոփերք Ե. 9)։ Ուրեմն Հայոց օրէնսդիր և գործոց մէջ ապրող փաստը առաքելական հաստատութեան փաստն էր, և ոչ Հռոմէական շնորհման փաստը. առաջինն փաստը երկրորդը կոչնչացնէ, եթէ սա բոլորովին թարմատար և յաւելուածական փաստի աստիճանի չիջնայ։

Երբ մի պատմական դէպքի վրայ խնդիր բացուի, պատմական փաստեր և արժանահաւատ վկայութիւններ պէտք է մէջ ահդ բերել, իսկ Հռոմէական շնորհման համար բնաւ վաւերական փաստ կամ վկայութիւն չկայ։ Այդ կարծեայ բոլոր փաստը Սեղբեստրոս Հռոմայ պապին անուամբ մէջ տեղ եղած մի պաշտօնագիր է, զոր մարթ է կարծել իբր թուղթ հովուական կամ կոնդակ շրջաբերական, յորում կայսերական հրովարտակի մը պատկանող մասեր ալ կան, եւ որ սովորական անուամբ կըկոչուի ԹՈՒՂԹ ԴԱՇԱՆՑ։ Այդ թղթով Ս. Սեղբեստրոս կուտայ Ս. Լուսաւորչին ոչ միայն պատրիարքական կամ կաթողիկոսական իշխանութիւններ, այլ եւ գերապատրիարքական իրաւասութիւններ, մինչեւ իսկ Անտիոքայ եւ Աղեքսանդրիոյ և Երուսաղէմայ պատրիարքաց վրայ իրաւասութիւն գործածելու իշխանութիւն։ Այդպիսի մի գրութիւն որ ամեն քննադատ միտք ունեցող թէ աղգային և թէ օտարազգի հեղինակներէ մերժուած է իբրու անվաւեր, պէտք չէ որ մեզ ալ երկար զբաղեցնէ ստայօդ լինելը վաստաբանելու։ Այնպիսի գրութիւններ կան որոց պարզ ընթերցումը իրենց մերժումն է, և մեք ալ այդ դիտմամբ յառաջ կըբերեմք աստէն այն հատուածը, յորում կը յիշուին Հայոց աթոռոյն կաթողիկոսական լինելուն

հաստատութիւնը, ընթերցողը թող կարդան և դատեն։

« Սաքօք ամենեքուքդ և հզօր աջով սուրբ առաքելոցս և նը-
« շանաւ խաչին Քրիստոսի ձեռնադրեցաք զկաթողիկոսն Հայոց
« զսուրբն Գրիգոր պապ և պատրիարք և Հայրապետ հրամա-
« նահան ի տիեզերական ժողովս, համապատիւ մեր հզօր աթո-
« ռոյս և երուսաղէմացւոց և Անտիոքացւոց և Ալէքսանդրա-
« ցւոց, և օրհնեցաք զնա ահաւոր անուամբ Սուրբ Երրորդու-
« թեանն գնելով ի վերայ արժանաւոր գլխոյ սորա զաջ օրբոյն
« Պետրոսի վարշամակաւս Քրիստոսի, և արարաք զնա պատ-
« րիարք Հայոց Մեծաց, զի ինքն և ամենայն աթոռաժառանգք
« սորա ինքնագլուխ եղիցին յիւրեանց եպիսկոպոսաց առնլով
« ձեռնադրութիւն առաջարկութեամբ իւրեանց թագաւորին։
« Եւ Հայոց Հայրապետան ձեռնադրէ կաթողիկոս վրաց աշխար-
« հին որ մերոյն Նունէին աշակերտեցան, և ուր և Հայ ազգ սիրե-
« եալ յընդահանուր աշխարհի ի մէջ այլազգաւ Քրիստոնէից,
« իշխանութիւն ունի Հայոց պատրիարքն ձեռնադրել նոցա ե-
« պիսկոպոս։ Եւս և աշխարհն Աղուանից եղիցի ընդ հնազան-
« դութեամբ Հայոց Հայրապետին, և առաջարկութեամբ Աղու-
« անից թագաւորին Հայր առեան Հայոց ձեռնադրեցէ նոցա կա-
« թողիկոս, և պատրիարքն երեքին երուսաղէմի և Անտիոքայ
« և Ալէքսանդրիոյ յորժամ պատրիարք ձեռնադրին, կամաւ և
« ընտրութեամբ Հայոց Հայրապետին լիցի, և որ ոք նոտղի յա-
« թոռ պատրիարքութեան զգաստանութիւն հաւատոյն իւրոյ,
« զոր պարտէր մեզ ծանուցանել, զայն Հայոց Հայրապետին ծա-
« նուցցէ, զի զնա կարգեցաք մեզ գլխաւորիան և հրամանահան
« ի վերայ ամենայն Ասիական միջնաշխարհի և ի յելից արեւու
« մինչև ի դրունս դրախտին »։

Ա. Հաւատիկ Սեղբեստրոսեան շնորհման մեծ կոնդակը։ Հարկ չեմք սեպեր այդպիսի մի անճոռնի գրուածոյ քննութեան մնալ և օրինաւոր կերպով զայն քննադատել։ Օտարատոհմ ոճը, յետագայ ժամանակաց սեփհական նոր բառերը, վերջին դարերու ասացուածները, պատմական դիպուածք, որք այդ թղթին կեղծած ժամանակը դեռ կատարուած չէին, վերջապէս ամենայն ինչ վերջին աստիճանի ստուգութեամբ կապացուցանէ թէ թուղթ դաշնոյ բնաւածը Սեղբեստրոսի վաւերական գրութիւնը չէ, այլ խաչակրաց ժամանակներուն ան-

վաւեր և կեղծալ մի արտադրութիւն է։ Այդ կէտը այնչափ յայտնի է որ Սեղբեստրոսեան շնորհման դրութիւնը պաշտպանողներէն ալ շատեր դաշանց թուղթը պաշտպանել չեն համարձակիր, և եթէ չեն ալ ուզեր բացարձակ կերպով մերժել և անարգել զայն, գոնէ լուռութեամբ կանցնին, և անոի փաստ չեն քաղեր։

Այդպիսիք Սեղբեստրոսեան շնորհման դրութիւնը պահելու համար այդպէս կըպատճառաբանեն։ Թէպէտև դաշանց թուղթը անվաւեր նկատուի իր այժմեան ձևին կամ իր ազաւազ ձևին ներքև, սակայն Հայոց աթոռոյն կաթուղիկոսական աթոռ լինելու շնորհումը և շնորհման առթիւ Սեղբեստրոսի կողմանէ մի դաշանց թուղթ դրուած լինելը ստոյգ է։ Այդ պատճառաբանութիւնը սա կուզէ հաստատել թէ դաշանց թղթոյն էութիւնը, և թերևս ալ անոր էական մասերը անվաւեր չեն։ Այդ կարծիքն հաստատելու համար պէտք ունին դաշանց թղթէն դուրս վկայութիւններ գտնել և ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից պատմիչներու վկայութեամբ զայն հաւաստել։ Արդ այսպիսի վկայութիւններէն շատեր Տրդատայ և Լուսաւորչի ի միասին ի Հռոմ ուղևորելն ալ չեն ընդունիր, և որք կընդունինն, ուրիշ դաշանց թուղթ չեն յիշեր, բայց եթէ Ս. Կոստանդիանոս կայսեր և Ս. Տրդատ թագաւորին միևնոյն ինքնուած քաղաքական դաշանց թուղթ մը, յորում և ոչ իսկ բառ մը կգտնուի Ս. Սեղբեստրոսի կողմանէ Ս. Լուսաւորչի տրուած եկեղեցական առանձնաշնորհման և իրաւասութեան։ Պատմիչներէն գրեթէ բոլորը եկեղեցական անձինք են, և ասոնք հարկաւ աւելի մոռագրութիւն ըրած կըլինէին եկեղեցւոյ և եկեղեցական իրաւանց և յարաբերութեանց կէտերը յիշատակել, քան թէ պարզապէս քաղաքական պետութեան վերաբերեալ կէտերը։

Բոլլանդեան հաւաք լատին քննագատք վարուց և վկայաբանութեանց սրբոց, ուրիշ արևմտեան հեղինակաց հետ համաձայնութեամբ բացէ ի բաց կըմերժեն Ս. Լուսաւորչին և Ս. Տրդատայ ի Հռոմ ուղևորութիւնը. (Bolland. VIII. 401. ի 30 սեպտ.), և այս կերպով արմատէն կը քանդեն Սեղբեստրոսեան շնորհման կարծիքը։ Մեք Ս. Լուսաւորչի ի Հռոմ երթալուն դէմ բացարձակապէս չեմք մրցիր, զի այդ մասին ազգային

պատմչաց մէջ շփոթ գաղափարներ կը տիրեն, և զանոնք քննել և քննադատել ներկայ նպատակէս դուրս կը դատեմք։ Իսկ եթէ մեր կարծիքը հարցնէ ոք, համարձակ կըսեմք թէ ըստ մեր կարծեաց Ս. Գրիգոր Լուսաւորիչ և Ս. Տրդատ թագաւոր ի Հռոմ գնացած չեն, և թէ Ս. Տրդատ թագաւորին Կոստանդիանոսի օրով ի Հռոմ երթալուն պատմութիւնը՝ ներսնի օրով Տրդատ անունով Հայոց թագաւորի մը Հռոմ երթալուն վրայօք Հռոմայեցի պատմիչներուն պատմութիւնէն յառաջ եկած շփոթութիւն մըն է։ Սակայն ամեն առթի մէջ կը պնդեմք թէ Լուսաւորչի և Տրդատի ի Հռոմ երթալուն պատմութիւնը ընդունողներն ալ չեն կարող Սեղբեստրոսեան տուուչութիւնը կամ շնորհումը հաստատել։

Սուսանուն դաշանց թղթոյն պաշտպաններ կը կարծեն թէ այն Ագաթանգեղոսի պատմութեան ամբողջացուցիչ մի մասն է, սակայն դիտելի է որ Ագաթանգեղոսի յունարէն բնագիրը այդ դաշանց թուղթը չպարունակեր, և ոչ ալ հնագոյն և ընտրելագոյն գրչագիրներուն մէջ կրգանուի այն։ (տպգր. 1835 ամի)։ Վ. Ենեթկոյ հրատարակիչք կը հաւատան թէ դաշանց թուղթը չկայ ոչ Պարիսու մատենադարանին օրինակին մէջ որ գրեալ է ի ՉԴ. (1251), և ոչ յօրինակին մատենադարանին Մխիթարեանց Ս. Ղազարու, որ գրեալ է ի ՉՂԹ. (1350.), որք մեզ ծանուցեալ օրինակաց մէջ ընտրելագոյն կը նկատուին։

Ագաթանգեղոսի պատմութիւնը ընդաձակ գլուխ մը կընուիրէ Տրդատայ և լուսաւորչի ի Հռոմ ուղևորութեան, ուր կը յիշատակէ և Հռոմայ եպիսկոպոսը փառաւոր անուանկոչութեամբ. «Հայրապետն մեծ արքիեպիսկոպոսն աշխարհամուտ «դրանն, որում անուն կոչէր Սեղբեստրոս» (Ագաթ. ճիզ. եր. 618), որ Ս. Լուսաւորիչը դիմաւորելու ելած է։ Ագաթանգեղոսի յիշած դաշինքը միայն քաղաքական դաշինք է, Կոստանդիանոս Կայսեր և Տրդատ թագաւորին մէջ տեղի, և ոչ երբէք եկեղեցական պայմանագիր կամ արտօնագիր Հռոմայ և Հայոց եկեղեցիներուն գլուխներուն մէջ հաստատուած։ «Սոյնպէս «(Կոստանդիանոս) արքային Տրդատայ իբրև եղբօր սիրելոյ սէր «ցուցեալ ուրախութեամբ մեծաւ, մանաւանդ վասն աստուա«ծածանօթութեան նորա առաւել, դաշինս կռէր ընդ նմա «միջնորդ կալեալ զհաւատոյն որ ի Տէր Յիսուս Քրիստոսն էր,

«ղի անշուշտ մինչ ի բուն զհատատարիմ սէրն ի մէջ թագա-
«ւորութեանցն պահեսցեն.» (Ագաթ. եր. 649)։ Այդ կտորին
մէջ Ագաթանգեղոս երկուց թագաւորութեանց մէջ հաստա-
տուած բարեկամութեան վրայ կը խօսի և ոչ թէ դաշտուղիկա-
սական իրաւասութեանց տուրուչութեան վրայ։ Ինչ եղաը Ս.
Լուսաւորչին սրուած և ցուցուած պատիւներն ալ կը պատմէ,
որք հասարակ և տիեզերական պատուասիրութիւններէ զատ
բան մը չեն պարունակեր, և որք նոր իշխանութեան կամ նոր
աստիճանի մը տուրուչութեան չեն ակնարկեր։ «Ապա յետ այ-
«սորիկ մեծարեալ լինէին զարմանօք մեծապատիւ շքեղու-
«թեանն կարգօք յարքունեացն և յեկեղեցեացն և ի պատուա-
«կան իշխանաց քաղաքին, և մեծամեծ պատարագօքն և երե-
«ւելի պարգեւօքն պատեալ սիրով։ Ապա հրաժարեալ ի ծիրա-
«նափառ օգոստականացն և ի Սրբոյ կաթողիկոսէն, ընկալեալ
«ողջոյն յեկեղեցւոյն և յերևելի իշխանաց քաղաքին, և ամե-
«նայն իրօք աջողելովք ելանէին յոսկիապատ կառս արքու-
«նատուրս, և մեծաւ շքաւ և բազում վայելչութեամբ ու-
«նէին զճանապարհս արքունականս, և ամենայն քաղաքաց
«պատահելոց պայծառագոյն լինէին, և մեծամեծս ըստ արժա-
«նողութեան արքայութեանն մեծամեծ պատուեալ անգստին
«մինչև գային հասանէին յերկիրն Հայոց, յԱյրարատ գաւառ,
«ի Վաղարշապատ քաղաք ի հանգստակայս սրբոցն։ Եւ բերէին
«զպարգևս բերեալս անդստին, զոսկին և զարծաթն և զպա-
«տուականս կարասիսն ի նուէրս սպասու Աստուծոյ եկեղեցւոյն
«և ի տունս նուիրեալ սրբոց վկայիցն դնէին, նաև զտուեալ
«ոսկի սպասս կայսերն ի նոյն հանգիստ սրբոցն դնէին։» (Ա-
գաթ. եր. 651)։ Այդ վկայութիւնը ըստ ինքեան կարևորու-
թիւն մը չունի, և մեք զայն երկարօրէն յառաջ բերինք միայն
ի ցուցանել որ եթէ Ագաթանգեղոս մանրամասնաբար կը խօսէ
կայսեր և իշխանաց ընծաները, ոսկեղէն և արծաթեղէն անօթ-
ները, պատուական կարասիները, ոսկիապատ կառքը և այլն,
այդչափ մանրամասնութիւնները գրողը չէր կրնար մոռնալ կա-
թողիկոսական իրաւասութեան տուրուչութիւնը, եթէ երբէք
այդպիսի մը տուրուչութիւն տեղի ունեցած լինէր։

Ս. Գրիգորէս կաթողիկոս, Ս. Լուսաւորչի որդին, գրելով առ
Կոստանդ կայսր քաղաքական գաշանց կակնարկէ և ուրիշ տե-

սակ դաշինք կամ շնորհումն չըլիշեր։ «Յուշ լիցին քեզ պայ-
«մանք ուխտի հօրն քո Կոստանդիանոսի որ առ մերում թա-
«գաւորին Տրդատայ, և մի տացես զաշխարհն քո Պարսից
«անաստուածից, այլ օգնեսցես մեզ զօրօք թագաւորեցուցա-
«նել զորդի Տրդատայ դհոռոմով։» (Խոր. գ. ե. եր. 389)։
Այդ վկայութեան մէջ Ս. Լուսաւորչի և Ս. Սեղբեստրոսի յի-
շատակութիւնն իսկ կըպակասի, և Ս. Գրիգորէսի վկայութե-
նէն միայն Կոստանդիանոսի և Տրդատայ մէջ քաղաքական
դաշնակցութեան մը եղած լինելը կիմացուի, և այն ալ ուղե-
ւորութեան առթիւ չէ, այլ ո՛չ գիտէ թէ երբ և ինչպէս։

Զենոբ Գլակ այդպէս կըխօսի Ս. Լուսաւորչի ուղևորու-
թեան վերայ. «Եւ անդ կացեալ բազում աւուրս, ապա խընդ-
«րեալ ի նշխարաց սրբոց առաքելոցն մասն ինչ, զահեակ ձեռն
«Անդրէի առաքելոյն և Ղուկասու աւետարանչին, զոր առեալ
«մեծաւ խնդութեամբ դարձան յաշխարհն Հայոց, և Տրդատ
«անցեալ գնաց յաշխարհն իւր յԱրարատեան քաղաք։» (Զե-
նոբ Ա. եր. 14)։ Եւ ստորև կըգրէ դարձեալ. «Ի ժամանակն
«յայնմիկ լուր եհաս ի դուռն արքայի (Տրդատայ) թէ Կոս-
«տանդիանոս կայսրն հաւատաց ի Քրիստոս Աստուած և դա-
«դարեցոյց զկռապաշտանն, նկեղեցեաց քաջութեամբ կալեալ
«զթագաւորութիւնն։ Արդ խորհուրդ ի մէջ առեալ գնալ ի
«դուռն կայսեր վասն դնելոյ դաշինս խաղաղութեան ի միջի։»
(Զենոբ. Ա. եր. 40)։ Տարոնոյ պատմութեան հեղինակն ալ
քաղաքական դաշինքէն զատ ուրիշ դաշինք չգիտեր և Լու-
սաւորչին շնորհուած սրբոց մասունքները կը յիշէ, իսկ կաթո-
ղիկոսութեան շնորհումէն բան մը չը գիտեր։

Մովսէս Խորենացին ալ կը գրէ այսպէս. «Ընդ հանգչելն Շապ-
«հոյ արքայի Պարսից ի պատերազմանն և ի գնալն Տրդատայ ի
«Հռոմ առ սուրբն Կոստանդիանոս։» (Խոր. Բ. ԶԴ. եր. 338)։
Աղբիւրին պատմաբանից նախահայրն որ իւր ժամանակի աւան-
դութիւնները և տեղեկութիւնները հաւաքեց, և Ս. Լուսա-
ւորչէն միայն զատ մը յետոյ գրեց, և ոչ իսկ Ս. Լուսաւորչին
Հռոմ երթալը կընդունի, այլ միայնակ Տրդատին երթալը կը
յիշէ, որով և ի հիմանէ կը խախտէ Հռոմէական և Հայոց սխրա-
նեռուն յարաբերութեան և Սեղբեստրոսեան շնորհման դրու-
թիւնը։

Մեծին Ներսիսի օրով առ Վաղէս կայսր յղուած պատգամաւորներն ալ իրենց բանակցութեանց մէջ լոկ քաղաքական դաշանց ակնարկ մը ըրին, ինչպէս կը պատմէ Փաւստոս Բուզանդացին, և աւելի բան մը չյիշատակեցին. «Մանաւանդ «զի զուխտն յիշեալ զդաշանցն կռելոց զերդմանցն հաստա«տութեան, միջնորդութեամբ ի մէջ կայսերն Կոստանդիանոսի «և ի մէջ թագաւորի Տրդատայ եղեալ էր», (Բուզ. Գ. ԻԱ. եր. 55)։ Քանի վկայութիւն որ կը քննեմք, միշտ դաշանց հաստատութիւն ընելով լոկ քաղաքական դաշինք և բարեկամութիւն կիմացուի, և եկեղեցական տուրուձութեան կամ իրաւասութեան հետքն անգամ չերևեր։

Շահապիվանու Ժողովն, զոր գումարեց Ս. Յովսէփ կաթուղիկոս, առ Թէոդոս կայսր գրած նամակին մէջ հետևեալ խօսքերը կը գրուցէ. «Վասն որոյ և նախնին մեր Տրդատիոս յի«շելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ «ի հայրապան մարդախոշոշ հօրեղբարցն իւրոց ապրեալ անաս«յերկիրդ Յունաց, և ի ձէնջ թագաւորեալ տիրեր հայրենի «աշխարհիս, ոյնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս ընկալեալ «ի սուրբ հայրապետէն Հռոմմայ, որ լուսաւորեաց զխաւարա«յին կողմանս հիւսիսոյ.» (Եղիշէ Գ. եր. 123)։ Եղիշէ վարդապետի Վարդանանց պատմութեան մէջ յառաջ բերած այդ ժողովական նամակը Սեղբեստրոսեան դրութեան պաշտպաններուն ամենամեծ և զօրաւորագոյն վաստերքն մին է։ Հռոմմայ հայրապետին յիշատակութիւնը տեսնելով Հռոմմայ հայրապետին տուրուձութիւնը և շնորհումը վկայեալ և հաստատեալ կը կարծեն, սակայն Շահապիվանու Ժողովը Ս. Լուսաւորչին վրայ չխօսիր, այլ միայն Տրդատ թագաւորին վրայ, և Շահապիվանու Ս. Հարք կըվկայեն միայն թէ Հռոմմայ հայրապետն տուեր է Տրդատին քրիստոնէական հաւատքը և ոչ թէ Լուսաւորչին կաթողիկոսական իշխանութիւնը, և այդ երկուքը նոյն բան չեն։ Եւ որ և ևս է, յայտնապէս ստոյգ պատմութեան հետ ալ հակառակ են։ Ո՞ր թողուած որ Շահապիվանու Ժողովը Հռոմն ու Յունաստանը և ս կը շփոթէ և Տրդատին համար կըսէ թէ «տնաւ յերկիրն Յունաց» մինչ Տրդատ ըստ ստոյգ պատմութեանց տնաւ յերկիրն Հռոմայեցւոց և ոչ յերկիրն Յունաց, Ժողովը շփոթեր է Հռոմը Հոռոմոց հետ։ Ժողովական

թղթոյն նպատակն ալ եկեղեցական կամ հոգևորական խնդիր մը չէր, այլ պարզապէս քաղաքական և դինուորական օգնութիւն խնդրել Պարսից արշաւանաց դէմ։ Եղիշէ կը պատմէ. «Եւ իբրև յանգիման եղեն մեծի թագաւորին և ընթերցան «զգիր պաղատանացդ Հայոց աշխարհին և զյիշատակարանն «նախնեացն, բազում մատեանք ի մէջ եկեալ ընթերցան որ «զնոյն ուխտ հաստատութեան ի ներքս ունէին.» (Եղիշէ Գ. եր. 124)։ Արդ Հայոց թղթոյն նպատակը, և իրենց նպատակին համար կայսեր դիմելնին, և դաշնոյ թղթոյն Կոստանդնուպոլսոյ կայսերական դիւանին մէջ և ոչ թէ Հռովմայ եկեղեցական դիւանին մէջ գտնուիլը, կրկին և կրկին կը հաստատեն և կամրացնեն մեր կարծիքը թէ Հայոց ակնարկած և ի փաստ կոչած դաշինքը քաղաքական դաշնակցութեան հրիտակ էր և ոչ եկեղեցական իրաւասութեան կոնդակ։

Ամեն առթի մէջ Սեղբեստրոսեան շնորհման պաշտպանք պէտք է համոզուին և ընդունին թէ Շահապիվանու ժողովական թուղթն ոչ մօտէն և ոչ հեռուէն, ոչ ատուգութեամբ և ոչ հաւանականութեամբ չհաստատեր իրենց ենթադրական կարծիքը՝ թէ Հռովմայ հայրապետը եղած լինի Հայոց լնքնագլուխ և ազատ կաթողիկոսութեան ստեղծողը և հաստատողը, մինչ իրենք ալ այդ ժողովական թուղթէն աւելի զօրաւոր վկայութիւն մը չունին։

Առանք են ահա ժամանակակից կամ դրեթէ ժամանակակից պատմիչք և վկայք, յորս պէտք էր գտնէ որ մի անկասկած ակնարկ գտնուէր Սեղբեստրոսեան շնորհման համար, որպէս զի կարող լինէինք ընդունել որ թուղթ դաշնոյ կոչուած ազատազ և անվաւեր գրութեան հետ պէտք չէ մերժել նաև խնդրոյն էութիւնը, այն է Հայոց ազատ կաթողիկոսութեան Հռովմայ հայրապետութեան կողմանէ ահմանուիլը. և քանի որ բոլոր պատմիչները քննելով և ոչ մի մանր ակնարկ չեմք գտներ, ի բաւուննք կունենամք բացէ ի բաց մերժելու դաշնոյ թղթոյն թէ ձևն ու ներոյը, և թէ իսկական էութիւնը, և մոռացածին առասպելներուն կարգը դասել Սեղբեստրոսեան ստուգութիւնը։ Բայց իսօքերնիս և կարծիքնիս աւելի զօրացնելու համար յետագայ դարերու պատմչայ վկայութիւններն ալ քննեմք։

Յովհաննէս Զ. կաթողիկոս Դրասխանակերտցի, լիներորդ

դարու պատմիչ, որ նախկին դարերուն պատմութիւններն ալ քաղած է, բոլորովին կանգիտանայ Սեղբեստրոսեան տուա-
չութեան պարագային. «Յետ այսորիկ ապա գնացեալ և ընդ
«արքային Տրդատայ յաստուածակարգ կայսրն Կոստանդիանոս
«բազմօք իմն և նաղելի և վայելուչ մեծարանօք պատուէ
«զսուրբ հայրապետն իբրև զկենդանի մարտիրոս առաջի ան-
«կանելով և աղօթս նուիրականս և օրհնութիւնս ի նմանէ
«հայցելով, և այսպէս զնա պատուասիրեալ և Տրդատաւ հա-
«նեալ յոսկիապատ կառս մեծաւ շքեղութեամբ յուղարկէ
«զհանապարհայն.»: (Յովհ. եր. 26.): Չեմք գիտեր որպիսի մը միտք կարող կըլլինի այդ խօսքերուն մէջ գտնել Սեղբեստրոս մը և Սեղբեստրոսէ տրուած կաթողիկոսութիւն մը:

Ստեփաննոս Ասողիկ, մեռոսաններորդ դարու պատմիչ, նոյնպէս նախկին դարերու պատմութեանց համառօտող, այսչափ ինչ միայն կը գրէ. «Այլ ի գնալն Տրդատայ ի Հռովմ առ սուրբն
«Կոստանդիանոս նիւթէ չարիս Շապուհ ի վերայ մերոյ աշխար-
հիս.» (Ասող. Բ. Ա. եր. 51): Ասողիկ կանգիտանայ ոչ միայն Սեղբեստրոսի տուուչութիւնը, այլ նոյն իսկ առ Սեղբեստրոս ուղևորութիւնը:

Նախկին դարերուն վերաբերեալ վկայութիւնները ամբողջացընելու համար յառաջ կը բերեմք և յիշատակարան մը, զոր կը հրատարակէ Հայր Ներսէս Սալգսեան «Տեղագրութիւնք ի Փոքր և ի Մեծ Հայս» գիրքին մէջ, և որուն մեծ հնութիւն ու յարգ կընծայէ հմուտ հեղինակը, որովհետև նոյն ինքն Զորտուանել Տարոնոյ իշխանին մատանոյ ձեռագիր կը գտաէ Մշոյ Ս. Առաքելոց վանաց մէջ պահուած մագաղաթեայ մեծ ճառընտրին կցեալ յիշատակարանը: Այդ յիշատակարանը գրուած է ի ՆԻԲ (1079) թուին, և կը խօսի իբր ի բերանոյ Ս. Լուսաւորչին. «Արդ խնամանէքն Աստուծոյ և առաջնորդու-
«թեամբ կամ եղև ինձ և աստուածասէր քրիստոսասպասակ
«արքային Հայոց Տրդատայ գնալ ի տես ի սէր և ի միաբա-
«նութիւն մեծ քրիստոսասէրը և բարեպաշտ աշխարհակալ
«կայսերն Հռովմայեցւոց Կոստանդիանոսի հանդերձ բազում
«ազատագունդ զաւրաւքս Հայոց Հ. հազարաւ, որով հասեալ
«ի մեծ մայրաքաղաքն և յարքայանիստ գահն Հռովմ, մեծաս-
«մօծ պատուով և ամենաուսում սիրով ընկալեալ եղեաք յան-

«տուածասէր և բարեպաշտ արքայէն Կոստանդիանոսէ, և ի «սուրբ առաքելանման Հայրապետէն Սեղբեստրոսէ, կացեալ «ժամանակս ինչ առ նոսին դաշն խիրոյ և միաբանութեան ե- «դաք առ միմեանս Քրիստոսի արեամբն գրել և միջնորդել։ «Զի անջրելի լիցի ուխտ և միաբանութիւն Հայոց և Ֆրանկաց «մինչև ի կատարած աշխարհի։ Իսկ ղկնի դառնալոյն մերոյ «յաշխարհս Հայոց ի ժամ բաժանման՝ պատուեալք եղեաք ի նո- «ցանէ վառօք մեծամեծ և անթուելի պարգևօք։» (Սարգըս- եան. եր. 234)։ Մենք չեմք կարծեր որ այդ յիշատակարանը վաւերական Ս. Լուսաւորչի գրութիւնը լինի, և մանաւանդ ղի հակամէտ եմք ղայն իբր մի անվաւեր գրութիւն նկատել։ Սակայն քանի որ բաւական հնութիւն ունի, և մինչև իսկ մետասաներորդ դարու մի գրուած կը համարուի, մեք հարկ դատեցինք ղայն յառաջ բերել երկարօրէն, որպէս ղի և աս քան ղևս հաստատեմք թէ մինչև այն ժամանակ ոչ մի գիրք կամ գրուած չյիշատակեր Սեղբեստրոսեան շնորհման և ոչ իսկ ստուերը։ Ամեն տեղ քաղաքական մի դաշնադրութեան և երկուց պետական անձանց, Հռովմայեցւոց կայսեր և Հայոց թագաւորին մէջ տեղի ունեցած բարեկամական դաշնադրութեան մը յիշատակութիւնը կը լինի, առանց եկեղեցական իրաւասութեան ակնարկ մը ընելու, և մեք իրաւունք ունիմք կրկնել և միշտ կրկնել թէ Հայաստանեայց կաթողիկոսական աթոռոյն ոգեբնական և նախնական և առաքելական անկախութիւնը այնչափ աւելի կը հաստատուի, որչափ հակառակը հաստատելու համար յառաջ բերեալ կարծիք և դրութիւնք բոլորովին անհիմն կերևցուցին և քնաւ ժամանակակից կամ գրեթէ ժամանակակից վկայութեամբ չեն ապացուցուիր։

Չեմք կարող ճշդել թէ որ թուականին յօրինուեցաւ սուտ պաշանց ընդունը, ուստի հատուած մը բերինք և յիշեցինք ի վերոյ, և թէ երբ ի լոյս ելաւ հակառակորդաց շինծու վաստը, սակայն մինչև մետասաներորդ դարն եղող բոլոր վկայութիւններն քննելէ յետոյ կարող կը լինիմք հաստատել թէ երկոտասաներորդ դարէն յառաջ չէ այդ անվաւեր գրութեան յօրինուածը։ Եւ ոչ ալ կարող եմք ճշդել թէ ի՞նչ պատճառով պապիսի մի խարդախ գրութիւն ստեղծելու հարկ եղած է կամ անկէ օգուտ յուսացուած է։ Մեք կը կարծեմք թէ

Ս. Լուսաւորչին ի Հռոմ ուղևորութեան վրայ եղած շփոթ յիշատակը, և այդ առթիւ դաշանց թուղթ մը գրուած լինելու խօսքը, և այդ թղթոյն ինչ և ինչ տեսակ եղած լինելուն չը գիտցուիլը՝ առիթ տուին մի որ և իցէ խաբեբայ անձի, որպիսիք չեն պակսիր ոչ մի աշխարհ և ոչ և մի դար, կեղծ գրուածք մը ստեղծել և զայն մէջտեղ հանել իբր ի հնուց մնացեալ, և այս ալ շատ յարմար գործ մի եղած է խաչակրաց ժամանակ, երբ Հայոց և Լատինաց յարաբերութիւնք աւելի սերտ և աւելի կարևոր եղած էին, Հայք պէտք ունէին այն առեն թէ իրենց աթոռոյն անկախութիւնը պաշտպանել Հռոմէական պապերուն ձեռներէցութեան դիմաց, և թէ չվիրաւորել Լատինաց անձնասիրութիւնը ու իշխանասիրութիւնը։ Այդ մեկնութիւնը պատմութեանց մէջ յիշուած չէ, սակայն իրաց պարագայք իրարու հետ բաղդատութեամբ զայդ ճշմարտանման կը ցուցնեն, մինչև կողմանէ անվաւեր մի գրուածոյ ծագման խնդիրը մեզ երկարօրէն զբաղեցնելու իրաւունք չունի։

Սակայն այս ինչ ատոյգ է որ սկսեալ 319 ամէ յորում կը գրուի Ս. Լուսաւորչի կարծեցեալ ուղևորութիւնը, մինչև ցամն 1080, որ է մինչև ցկաթողիկոսութիւն Գրիգորի Դ. Տղայոյ, Ս. Լուսաւորչի և Ս. Տրդատայ ի Հռոմ ուղևորելուն պատմութիւնք երբէք եկեղեցական շնորհման մը կամ տուչութեան մը յիշատակութիւն կամ ակնարկութիւն չեն պարունակեր։ Ս. Լուսաւորչին որդւոյ և թոռանց դարը Հայոց լաւագոյն դարն էր, և այն ժամանակներուն մէջ ընտիր մատենագիրներ և պայծառ անձնաւորութիւններ ալ ծաղկեցան, սակայն իրենց գիրքերուն կամ գրուածներուն մէջ երբէք Սեղբեստրոսեան տուչութեան յիշատակութիւնը չը գտնուիր։ Ինն դարեր շարունակ աղդը չգիտեր և չճանչնար մի այդ տեսակ գրութիւն, և միայն այդ երկար միջոցը անցնելէն յետոյ, յորում հնար չէր որ պատմական դիպուածք մը ո՛չ գիր աւանդութեամբ միայն սահպանուէր, ահա յանկարծ ասանց փաստի և առանց հիմանց, և միայն կեղծ գրուածով մը կամ մատեանին պատմութեամբ մը ծոր գրութիւն մը կտեղծուի՝ հակառակ պատմութեան, հակառակ եկեղեցւոյ ընթացից և հակառակ ուղիղ խորհրդածութեան։ Եւ այդ առաջին ձայնն ալ որքա՜ն և յաւնուկ և ամեհին ընդդէմ կերպով

չէիներ, այլ շփոթ և խառնակ ձեռով, և այնպիսի պարագայի ե-
լով խմբագրած որք էական մասերն ալ անհաւատալի դարձնե-
լու կը ծառայեն։

Գրիգոր տղայ, որ առաջինն է ըստ մեզ այդ ենթադրական պատմութիւնը ոչ յայտնի այլ ընդ քօղով յիշատակելուս մէջ, կարի խակ մթին բացատրութիւններ կը գործածէ. «Մինչ ոչ «խոնարհ սրտիւ և աներկբայ մտօք էառ յանձն գնալ ի Կեսա-«րիա և դարձեալ ի Հռոմ, և առնուլ ձեռնադրութիւն ի «սրբոյն Սեղբեստրոսէ, և կամ թէ իւրքն ամենայն ոչ կացին «ի նոյն միաբանութեան սէր.» (Տղայ, առ Արևել. վարդ. եր. 71)։ Ձեռնադրութիւն առնուլ պարզաբար խօսելով կաթոլիկոսական ինքնագլուխ աթոռ ընդունել չէ։ Եթէ ուրիշ յատուկ վկայութիւններ լինէին կանխաւ, գուցէ այդ միտքին մեկնէինք, բայց իբր առաջին յիշատակութիւն և առաջին վաստ աւելի բացայայտ վկայութեան մը կը կարօտիմք։ Ձեռնադրութիւն առնուլ հաւասար կերպով կը յատկացուի նաև Կեսարիոյ աթոռոյն, և մեր հակառակորդք հարկաւ չեն համարձակիր ըսել թէ Կեսարիոյ աթոռէն առնուած ձեռնադրութիւնը ոչինչ էր, և Հռոմայ աթոռէն կրկին ձեռնադրութիւնը առաւ Ս. Լուսաւորիչն. կամ թէ Կեսարիոյ աթոռէն ձեռնադրութիւն առած լինելուն պատմութիւնը սուտ է, և միայն Հռոմայ աթոռէն ձեռնադրութիւն առաւ Ս. Լուսաւորիչն։ Գրիգոր Դ. Կաթողիկոսին Արևելեան վարդապետաց դէմ հաստատել ուզած կէտը այդ է, թէ Լուսաւորիչն ալ ուրիշ աթոռոց հետ միաբանութիւն և սէր հաստատեց, և իւր յաջորդքն նոյն սէրը և միաբանութիւնը պահեցին, և թէ ինքն ալ կարող է նոյն սէրն ու միաբանութիւնը վերահաստել։ Այդ է ըստ մեզ Գրիգորի Տղայոյ խօսից իմաստը, եթէ այդ հատուածը ստուգիւ վաւերական է, ըստ որում ամենց օտար ձեռք աղաւաղած է Գրիգորի գրութիւնը։

Յոլհաննէս վանական վարդապետ, երեքտասաներորդ դարու հեղինակ, կը գրէ Ս. Լուսաւորչին համար թէ. «Զայնպիսի ա-«ռաքելական այր սպաս կարգեցին.» (Ճառ հարցմանց), և Կիրակոս Գանձակեցի վարդապետ ժամանակակից վանականի կը գրէ թէ Սեղբեստրոս. «եւս (Լուսաւորչին) աթոռ հայրապե-«տութեան արկս աթոռակալի Պետրոսի.» (Պատմութիւն,

եր. 6.)։ Այդ բացատրութիւնները որք կարծես թէ առաւել իմն կը դուշնեն քան զոր հակառակորդք իսկ կուզեն հաստատել, բնաւ պատմական վկայութիւններ չեն, և անտուղը են Հայոց եկեղեցւոյ գործածութեան, և անվաւեր դաշանց թուղթէն սպրդեալ կերևին, զոր յիշեալ վարդապետք, Հռովմայ աթոռոյն ոչ համակիրք և ոչ բարեկամք, կերևի թէ կամաւ ուզած են յիշել որպէս զի Հռովմայ աթոռոյն արդէն տարածմանն երես բռնած ձեռնձգութեանց առջևը առնուն, և Լուսաւորիչը ոչ թէ Հռովմէ շնորհումն ստացած, այլ Հռովմայ պապին համահաւասար ճանչցուած ցուցնեն։

Վերագոյն ըսինք թէ երկոտասաներորդ և յաջորդ դարերու հեղինակներէն ամենքն ալ համամիտ չեն դաշանց թղթոյն անհաւատալի ենթադրութիւնը ընդունելու։ Ներսէս Դ. Շնորհալի կաթուղիկոսն, յոտանաւոր վիպասանութեան մէջ կպատմէ Ս. Լուսաւորչի և Տրդատայ ի Հռովմ ուղևորութիւնը, այլ չյիշեր և չընդունիր Սեղբեստրոսեան տուուչութիւնը.

« Զկոստանդեայ դարձն լուեալ
« Որ էր Հռովմայ թագաւորեալ
« Յայն ճանապարհ զօրօք ելեալ
« Եօթանասուն հաղար ընտրեալ.
« ՅԱւաքելոյն աթոռ հասեալ,
« Սուրբ ոսկերացն երկիրպագեալ,
« Ի յարքայէն պատուասիրեալ,
« Հայրապետէն սիրով պատուեալ,
« Գրիգորիոս վկայ եղեալ,
« Խոստովանող վերընկալեալ,
« Եւ զՏրդատ փառաւորեալ,
« Որպէս հրաշիւք վոխակերպեալ,
« Քրիստոնէական կրօնիւք խրատեալ,
« Եւ ի հաւատս հաստատեալ,
« Ի յուխտ դաշանց միաբանեալ,
« Թագաւորացն երկուց եդեալ.»

(Վիպ. տող. 662—674)։

Շնորհալին համաձայն է նախկին ժամանակաց հեղինակներուն, որք Ս. Լուսաւորչի և Ս. Տրդատայ ուղևորութեան առթիւ ուրիշ բան չեն յիշեր, եթէ ոչ Ս. Լուսաւորչին ցուցուած

մեծ պատիւները իբր կենդանի մնարմիրոսի, և Տրդատին հետ հաստատուած քաղաքական դաշինքը, և ուրիշ կերպով ալ չէր կարող վարուիլ Շնորհալւոյն նման մի բանիբուն և քննադատ հեղինակ։

Իսկ Ներսէս Լամբրոնացի Արքեպիսկոպոս կը յիշէ միայն թէ Հայոց աթոռն ինքնագլուխ ճանչցուած է ի շնորհս Ս. Լուսաւորչին ըստ պատրիարքական վիճակագրութեանց, և քնաւ չը-խօսիր Սեղբեստրոսի կամ Սեղբեստրոսեան շնորհման վրայ։ Այսպէս կը գրէ նա առ Ոսկան. «Ունիս ասել թէ վասն զի ի «մէնջ ոչ ունիմք զառաջարկութիւն ձեռնադրութեան։ Ծաղու-«արժանի է այս կարծիք, զի թէ զբնուսան ոչ ի ձէնջ, ի դէպ «էր զայս կարծել. իսկ ապա թէ սուրբն Գրիգոր ի Կեսարիա «էառ զշնորհն և սուրբն Ներսէս, և այնու եկեալ լուսաւորե-«ցին զՀայք, անկարօտ մնացին վերստին առ ձեզ ի ձեռնա-«դրութիւն դառնալոյ. զի Նիկիոյ ծողովոյն սահմանն ցուցա-«նէ որ երեք եպիսկոպոսունք կարող են զիւրեանց նախաթոռն «ձեռնադրել։ Եւ ի դեփտիկոնն յորում կարգ եպիսկոպոսացն «սահմանի գրեալ է որ Հայոց կաթուղիկոսն պատուեցաւ վասն «Սրբոյն Գրիգորի, որպէս և կղզին Կիպրոս վասն առաքելոյն «Բառնաբայ, և յիւրեանց եպիսկոպոսացն առնուն արքեպիս-»կոպոսքն ձեռնադրութիւն, և զայս ի ձերոց գրոց ունիմք «Հաստատել և ոչ ի Հայոց.» (Թղթ. առ Ոսկան)։ Լամբրոնա-ցին ոչ միայն Սեղբեստրոսի անունը բերան չառնուր, այլ և երբ կուզէ Հայոց աթոռոյն ինքնագլխութիւնը հաստատել, կըդի-մէ Նիկիոյ Ս. ծողովոյն և պատրիարքական վիճակագրու-թեանց, զորս մեք ալ յառաջ բերինք իրենց տեղւոյն, և ամե-նևին ակնարկ մը չընէր սուտ Թղթոյն դաշանց, որ կամ դեռ այն ատեն երևան ելած չէր, կամ եթէ ելած ալ լինէր, Ներ-սէս Շնորհալւոյ և Ներսէս Լամբրոնացւոյ պէս իմաստնագոյն անձերէ բոլորովին կանտարգուէր։

Ճառընտիրն ի գովեստ Լուսաւորչին՝ նորա ի Հռոմ ուղևո-րութիւնն յիշելով, և Տրդատայ ի միասին լինելն ալ պատմե-լով կը գրէ. «Դաշինս գնէին, կատակ գրէին, երգմունս անլու-«ծանելի երդնուին, ի վերայ միմեանց ի կեալ և ի մեռանել, «ազգէ յազգ մինչև յաւիտեան.»։ Այդ ճառն ալ որ վերջին դարերու գործ կը կարծուի, նախնի հեղինակաց հետևողու-

թեամբ կը հաստատէ մինչեւ թէ Տրդատ և Կոստանդիանոս իրարու հետ պաշտպանողական և յարձակողական դաշնակցութիւն հաստատելին անպայմանն ժամանակաւ։ Իսկ Սեղբեստրոսեան շնորհման վկայութիւնը իր զուր կորոնեմք մեք ամեն հեղինակաց մէջ, այնպէս որ եթէ շատ ալ յօժար լինէինք սրտով Հռոմմայ աթոռոյն շնորհումը մեծացուցանել, պիտի չկարենայինք զայդ ընել վաւերական վաստ ձեռնարկիս չունենալնուս համար։

Վերը յիշեցինք քանի մի հեղինակներ որք շփոթի կերպով մը ըսած են թէ Ս. Լուսաւորիչն ի Հռոմ երթալով, ինքն ալ պապ եղաւ Հռոմմայ պապին հաւասար։ Արդ սոյն այս հեղինակներն ալ աւելի ընդարձակ կերպով իրենց միտքը բացատրած ատենն Ս. Լուսաւորչին և Տրդատայ ուղևորութեան նպատակը և արդիւնքը սիրոյ և բարեկամութեան դաշինքէն անդին չեն անդներ։ Կիրակոս Գանձակեցի կը գրէ. «Գնալ եղև նմա ընդ մեծի «արքային Տրդատայ ի Հռոմ ի տեսութիւն նշխարաց սրբոց «առաքելոցն Պետրոսի և Պօղոսի և մեծի թագաւորին Կոստան«դիանոսի, և սրբոյ հայրապետին Սեղբեստրոսի, դնել ուխտս «և դաշինս ի միջի իւրեանց.»։ Յովհաննէս վանական կը գրէ. «Զորեքին նոքա Քրիստոսի արեամբն ի մեղան խառնեալ գրեցան «եղբարք.»։ Գրիգոր Տաթեւացի կը գրէ. «Լուսաւորիչն գնաց «ի Հռոմ ոչ վասն ձեռնադրութեան այլ վասն սիրոյ և միա«բանութեան.»։ Վարդան Բարձրբերդցի կը գրէ. «Եդին երկու արքայքն և երկու պապքն Գրիգոր և Սեղբեստրոս դաշն «ուխտի կեալ և մեռանիլ ի միմեանց վերայ, ղգիր ուխտին ա«նեն ի գրելն՝ թագին յահաւոր խորհուրդն,»։ Այդ վկայութիւններն ալ կուգան կը խառնուին նախնի մատենագրաց գրածին և կը պնդեն քաղաքական մի դաշնագրութեան կազմութիւնը, որոյ նկատմամբ մեք չեմք ուզեր ո և է խնդիր յուզել, որովհետև այդ խնդիրը բնաւ կապակցութիւն չունի հայոց աթոռոյն ինքնագլուխ կաթողիկոսութեան խնդրոյն հետ։ Ջէպէտև Լուսաւորչի և Սեղբեստրոսի անուններն ալ դաշնագրոյն կազմութեան մէջ կը յիշատակուին իբր ստորագրողք, սակայն բարեկամութենէ աւելի բան չկայ գաշնագրին մէջ, իսկ կաթողիկոսութեան և ինքնագլխութեան՝ տուրս չունենալու կամ ընդունելութեան խօսքն անգամ չկայ։ Գրիգոր Տաթեւա-

ցի ձեռնադրութեան պատճառն իսկ բացէ ի բաց կը մերժէ, ուղղելով թերևս Գրիգոր Տղայի սխալ բացատրութիւնը։ Վարդան Բարձրբերդցին ալ Սեղբեստրոսն ու Գրիգորիոսը երկու ոլապեր կոչելով, երկու հաւասարներ կենթադրէ, և այդ պատգամէ քեզ յայտնապէս և բացատկականէս կը մերժեն Սեղբեստրոսեան տուտուչութիւնը։

Ջանազան հեղինակներէ յիշուած վկայութեանց կարգին կը յիշատակուի և Ոսիմոս Միանձն անուն հեղինակ մը, որոյ այդ են խօսքերն. «Գիտելի է զի յԱրևելս, յաշխարհն զոր Մեծ «Հայք կոչեմք, է իշխանութիւն ինչ և աթոռ որ ունի ընդ իւ«րև քաղաքս և աւանս բազումս, նա մանաւանդ և նահանգս։ «Պատրիարքն այսր աթոռոյ, որ կոչի կաթողիկոս, չէ անկեալ «ընդ այլոյ իշխանութեամբ, այլ հաստատէ եպիսկոպոսունս «ի քաղաքս աշխարհին, զի Սուրբ Գրիգոր քահանայապետն Հա«յոց չէր ընդ իշխանութեամբ ուրուք, և մինչև ցայսօր ժա«մանակի ազատ և աղիկամի է աթոռն Հայոց Մեծաց, և ամե«նայն աթոռակալք նորա ընդունին յեպիսկոպոսաց իւրեանց «զձեռնադրութիւն Սրբոյն Գրիգորի.»։ Այդ վկայութեան նկատմամբ աւելի չեմք խօսիր, զի բացայայտ է, և կը զարմանամք միայն թէ ինչպէս Հռոմէական հեղինակք ոմանք զայն չառաջ բերելով, Սեղբեստրոսեան տուտուչութիւնը կուզեն անով հաստատել։ Լուսաւորիչը ուրիշի իշխանութեան ներքև չէր ըսելը, ուրեմն Սեղբեստրոս ինա ազատած էր ըսել չէ, զի նախնեաց սովորութեամբ և առաքելական հաստատութեամբ չառաջ եկին ինքնագլուխ հայրապետութիւնք եկեղեցւոյ։

Մեր խնդրոյն վերաբերեալ, ամեն վկայութիւնները քննած լինելու համար յիշատակեմք և շարականին այն տողը, յորում լուսաւոր փաստ մը կը կարծեն տեսնել Սեղբեստրոսեան տուտուչութեան պաշտպանք. «Կեցո զորդի ծառայի քո զոր ի Հռով«մայ Գահիցն վերապատուեցեր, ուր եդին զվէմն Հաւատոյ «հիման սուրբ եկեղեցւոյ.»։ Այդ շարականը մեռասանեորդ դարու գործ է, վասն զի կը պատկանի Գրիգոր Մագիստրոսի գրչին, ինչպէս առհասարակ ընկալեալ մի ստուգութիւն է։ Եւ մեք գիտեմք թէ մեռասաներորդ դարու վկայութիւնք չեն կարող չորրորդ դարու պատմական դէպքը հաստատել, զոր օրինակ հնար չէ ներկայ ապրող մարդոց վկայութեամբ հաստատել

երկոտասաներորդ դարու մի գործ, օրինակ իմն Թորոս Ա. կամ Լևոն Ա. Ռուբենեան իշխանաց ըրածները։ Բայց աստի Մագիստրոսի շարականին վկայութեամբ Սեղբեստրոսեան տուժչութիւնը հաստատելու համար պէտք է նախապէս հաստատել թէ ոչխէ ըսուածը Ս. Գրիգոր Լուսաւորիչն է, Ձոոյ ըսուածը Հայոց եկեղեցին է Հռովմայ Գահ ըսուածը Հռովմայ պապութիւնն է, և վերապարծեալ ըսուածն ալ անկախ կաթողիկոսութիւն տալ ըսել է, և միանգամայն պէտք է ցուցնել թէ ոչ ոք են որ եղեն ղէմն հաստատոյ Ս. Պետրոս առաքեալն է կըսեն։ Այդ ամեն կէտերը ցուցնել դժուարին է, մանաւանդ թէ և անհնարին, մինչ նոյն շարականին պարզ և յատուկ մեկնութիւնը ինքնին ծանօթ է, զի Մագիստրոս իւր իսկ որդւոյն կենաց համար կաղօթէ որ պատուոյ աստիճան ստացած եր կայսերական Գահէն նորոյն Հռովմայ, այսինքն Կոստանդնուպոլսոյ, զոր կը ներկայէ իբր պաշտպան տուրք եկեղեցւոյ։ Պարզ վկայութիւններն են որ պատմական փաստ կը կազմեն և ոչ բռնազբօսեալ մեկնութիւնք։

Իբր հետաքրքրական մի քննադատութիւն առաջի կընծայեմք մի և նոյն գործոյն երկու հեռաւոր դարերու մէջ իրենց ժամանակին հոգւով ու ոճով բացատրուած պատմութիւնը։ Գործն է չորորդ դարու մէջ տեղի ունեցած Կեսարիոյ աթոռին ձեռնադրութիւն ընդունելու սովորութեան դադարումը։ Վարդան Բարձրբերդցի պատմիչ երեքտասաներորդ դարու կը գրէ այսպէս. «Զոր տեսեալ Թագաւորին և նախարարացն և «իմաստուն առաջնորդաց եկեղեցւոյ անուանեն զնա պատ«րիարք, զի առ մեզ կան ասեն սիւնքն անշարժելիք Բարթողի«մէոս և Թադէոս, և Ս. Լուսաւորիչն որ պապն կոչեցաւ ի «Հռովմ հաւասար այնմ, որ նստի յաթոռն Պետրոսի առաքե«լոյն.»։ Իսկ Ցովհաննէս կաթողիկոս պատմիչ իններորդ դարու կը բացատրէ այսպէս. «Ոչ և զս ըստ սովորութեան առաջնոյ «առաքեալ զնա ի Կեսարիա, այլ լքեալ ի բաց զօրէնն առաջին «ըստ օրինի պատրիարքաց կալան կարգ ժողովոյ եպիսկոպո«սաց ձեռնադրել, որպէս Անատոլ, և Աղէքսանդրիա և Հռովմ «և Եփեսոս և Կոստանդնուպոլիս և Երուսաղէմ, զի մի այլոց «ոմանց ընդ ձեռամբ անկցի, որ ինքնակալութեամբն է պա«տուեալ պատրիարքութիւն.»։ Դէպքը մի և նոյն է և երկու

պատմիչներուն ալ նպատակը նոյն է, այն է Հայաստանեայց կաթողիկոսութեան աթոռոյն ազատ և աղեկամի և անկախ և ինքնագլուխ լինելը հակառակորդաց դիմաց պաշտպանել։ Սակայն Յովհաննէս կաթողիկոս Կոստանդնուպոլսոյ յոյն պատրիարքաց ձեռնձգութիւնը կուզէ արգելուլ, մինչ Վարդան վարդապետ Հռոմայ Լատին պատրիարքաց ձեռնձգութիւնը արգելուլ կը դիտէ, իւրաքանչիւրը իւր նպատակին համար ազդուագոյն կարծած վաստը կը գործածէ, այդ է իրենց տարբերութիւնը։

Հայոց կաթողիկոսութեան անկախութեան ծագումը բացատրելու համար և Ս. Սեղբեստրոսի Հռոմայ Հայրապետին կողմանէ ձրիաբար շնորհ կամ տուրգութիւն ստեղծողներուն դրութեան դէմ խօսքերնիս վերջացնելու համար, կեղրակացնեմք թէ թուղթ գաշանց կոչուած տուրգութեան կոնդակը անվաւեր և խարդախեալ գրուած մի է, թէ տուրգութեան էութեանն ինպատա բնաւ մի պատմական փաստ չկայ ոչ ժամանակակից և ոչ գրեթէ ժամանակակից հեղինակաց մէջ, թէ ենթադրեալ տուրգութեան ժամանակէն իբր իննհարիւր տարի յետոյ ապրած մէկ երկու հեղինակներուն շփոթ խօսքերը ոչ վաստ կրնան լինել և ոչ ալ պարզ իմաստ մը ունին, թէ նաև վերջին դարերու մատենագրաց առաւելագոյն և ընտրելագոյն մասը չընդունիր և կը մերժէ Սեղբեստրոսեան շնորհման ենթադրութիւնը, և այդ ղօրաւոր և ապացուցեալ եղրակացութեանց վրայ հիմնուելով բացէ ի բաց կը մերժեմք և չեմք ընդունիր թէ Ս. Սեղբեստրոս Հռոմայ պատրիարքն շնորհած լինի Հայաստանեայց Եկեղեցւոյ անկախ կաթողիկոսութիւնը, զոր տուած է առաքելական հաստատութիւնն և նախնեաց սովորութիւնն։

(Շարունակելի) Մաղաքիա Եպիսկոպոս։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՅՐԱՍՏՈՒՈՂ ՍԵՐՆԴԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԻՒՆԸ.

(Շարունակութիւն, տե՛ս թ. ը.)

Զ.

Պատուհանների թիւը և նոցա մեծութիւնը, դասատանց երկայնութիւնը, լայնութիւնը և բարձրութիւնը, այս բոլորը շատ սերտ կապ ունին այս կամ այն դպրոցի շինութեան կառուցման ընդհանուր պայմաններ. Եւ, որից դուրս է գալիս, որ դպրոցի շինութեան մէջ փոփոխութիւն անելու համար, հարկաւոր է նախ և առաջ ամբողջ շինութիւնը արմատական փոփոխութեան ենթարկել կամ որ միևնոյն է՝ նորից կառուցանել. Բայց որովհետև այդ կերպ արմատական փոփոխութիւնը շատ մեծ գումարներ կըպահանջէ, որ յաճախ անձեռնհաս են լինում մնթելու այն դպրոցները, որք կառուցված են դեռ այն ժամանակներում, երբ դպրոցական առողջապահութեան հարցը գտնվում էր մանուկ դրութեան մէջ, ուրեմն մանկավարժները և դպրոցների կառավարիչները մասամբ կարող են իւրեանց արդարացնել այն բանում, որ դպրոցի մէջ լուսաւորութիւնը և օդը չեն համապատասխանում առողջապահական պահանջներին. Բերաւ՝ բաւական է միայն աշակերտների թիւը պակասացնել և օդը լաւ կըլինի, բաւական է այդ սակաւաթիւ աշակերտներին տեղաւորել պատուհաններին աւելի մօտ և լաւ լուսաւորութիւն կստացուի, սակայն և այստեղ երևան են գալիս յարգելի պատճառներ, որոց շնորհիւ մանկավարժները և դպրոցների կառավարիչները չեն դիմում այդ միջոցներին. Գործը նրանում է, որ դպրոցական կրթութիւնը տարէ ցտարի աւելի նշանակութիւն է ստանում, իսկ դպրոցների թիւը բոլորովին չի համապատասխանում այդ պահանջի իրագործմանը. դորա համար էլ մնում է կամ առողջապահութեան պահանջներին նայելով մանուկների մի որոշ թիւ առանց կրթութեան թողուլ և կամ ուշք չդարձնելով այդ պայմանների վերայ՝ կրթել որքան կարելի է շատ մանուկներ. Մեծամասնութիւնը կշիռ է տալիս աւելի վերջին հարցի որոշմանը և չի կարելի ասել, որ այդ մեծամասնութիւնը բոլորովին անարդար կերպով է վարվում. Այս կերպով ահա, այդ հարիքը մնում է եթէ ոչ անուղղելի, գոնէ յաճախակի ենթարկվում է բարերար փոփոխութեանց. Բայց սոցա հետ իմիասին շարունակվում են դպրոցի և միւս անհոգութիւնները, որք չեն կարող արդարանալ նոցա իբրու թէ դժուարին արմատախիլ անելու պատճառաւ. Այդպիսի անհոգութիւններն են օրինակ՝ վատ շինուած դպրոցական սեղանները, նստարանները և դասատանց արհեստական վատ լուսաւորութիւնը.

Նստարանների և սեղանների հարցը մշակուած է բաւականին լիակատար

կերպով Ամերիկայում, Շվեյցարիայում և Գերմանիայում այս կամ այն դպրոցի մէջ գործ են ածւում շատ գաղափարական նստարաններ։ Այս հարցը շատ նշանաւոր է, որովհետև աշակերտի առողջութիւնը մեծ մասամբ պայմանաւորւում է աշակերտի դաստատան մէջ պարապելու ժամանակ ընդունած մարմնոյ դրութեամբ։ «Մարմնոյ անկանոն և կոր դրութեան ժամանակ, ասում Գիլօմը, շատ յաճախ ճնշւում է իրանի ստորին մասը։ Այս ճնշումը մասամբ պատճառ է լինում անկանոն մարսողութեան և աղիքաժակի պակասութեանը, որ շատ յաճախ երեւում է ուսումնարան գնացող մանուների մէջ։ Իրանի դէպի առաջ դուրս ընկնելուց վնասւում են նոյնպէս կուրծքի գործարանները, որոնք սեղմուելով դժուարացնում են արեան շնչառութիւնը և արեան կանոնաւոր շրջանառութիւնը»։ Մարմնոյ այս անկանոն դրութեանից պատճառուն են գլխաւորապէս չնարաններ չունեցող նստարանները, որոնք սաստիկ նեղացնում են մանուկներին, շատ հասկանալի է, որովհետև հասակաւոր մարդիկն էլ, որոց մկանութները աւելի ուժեղ են՝ դժուարութեամբ են մի ժամ շարունակ նստում անկնարան աթոռի վերայ։ Նոյնպէս վնասակար հետեւանք է ունենում և այն հանգամանքը, որ նստարանները երբեմն չափազանց բարձր են լինում, որ մանուկները կարծէք նստած են այսպէս ասել՝ նստարանի սուր ծայրին, որտեղից նոքա ցանկանում են յատակին հասցնել ոտները։ Այդ անյարմարութիւնից վնասակար կերպով ճնշւում են նեարդերը և ոտների արիւնատար անօթները որով և լիակատար կերպով բացատրւում է մանուկների ոտներով խաղալ-ալու հակամիտութիւնը և կամ նոցա րոպէ առ րոպէ արած փոփոխութիւնները իւրեանց դրութեան վերաբերութեամբ։ Մէյերը ասում է թէ «մանուկների ողնաշարի կրծքային մասը համարեա միշտ դուրս է ընկած դէպի աչ, որի պատճառը որոնելու է իրանի այն դրութեան մէջ, որ աստկանում աչ ուսը որքան կարելի է վեր պահելու կարեւորութիւնից,— այն կարեւորութիւնից, որ պատահում է ամեն տեղ, որտեղ կան բարձր նստարաններ»։ Երբեմն սեղանները նստարաններից այնպէս հեռու են դրուած լինում, որ մանուկը ստիպեալ կամ պէտք է նստէ նստարանի եզերքին և կամ կուրծքը սեղմի սեղանին, որ շատ վնասում է թոքերին։ Աչ պակաս վնաս է պատճառում և այն հանգամանքը, որ երբեմն նստարանները շինւում են շատ աշակերտուհիների համար, աշակերտուհիները իրանց տեղերը մտնելիս՝ կողք կողքի գնալով՝ չեն նկատում, որ նոցա վերնազգեստները դէպի մի կողմն են քաշւում և երբ աշակերտուհիք նստում են, այն ժամանակ նոցա նստած տարածութիւնը յաճախ անհարթանում է մի կողմը հաւաքւում են շորերի և վերնազգեստների ծալուածքները, իսկ միւս կողմից վերազգեստը և միւս ազդանելիքը աւելի հարթ հասաստ կերպով են փռւում։ այս կերպով նոցա մէջքները անկանոն դիրք է ստանում, որ մնում է ոչ առանց վնասակար ներգործութեան, մանաւորապէս ծննդական գործարանները հասունութեան տարիներում։

Կարեւորութիւն չէկայ խօսել այստեղ դպրոցական սեղանների և նստա-

բանների վատ կազմուԹիւնից և մանկանց մարմնոյ վատ դրուԹիւնից յառաջացած հիւանդուԹեանց բոլոր տեսակների վերայ։ Բայց այս մասին շատ քիչ հոգ են տարել մանկավարժները, իսկ եԹէ հոգ էլ են տարել, ոչ այնպէս, ինչպէս պէտք էր։ «Անուշադիր ուսուցիչները նկատում է դօկտօր Էրիսմանը, առ հասարակ ուշադրուԹիւն չեն դարձնում, Թէ ինչպէս են նստած դասատան մէջ ուսանողները, իսկ այն ուսուցիչները, որք ուշադրուԹիւն են դարձնում իրանց աշակերտների վերայ, անգադար գանգատվում են, Թէ մանուկներին դժուար է ստիպել ուղիղ նստելու, անդադար այդ մասին յիշեցնում են նոցա, բարկանում են նոցա վերայ և մինչև անգամ աշակերտների վատ նստելու համար՝ պատժում են նոցա։ Բայց մանկավարժները այսպիսի միջոցներից կարող էին որև է օգտակար հետևանքներ ստանալ այն պատճառով միայն, որ նոքա բոլորովին վատ հասկացողուԹիւն ունէին մանուկների մարմնոյ վատ դրուԹեան պատճառների վերայ՝ պարապելու ժամանակ։ Վերջերում ուսուցիչներից մեծ մասը, երևի ինքնիրան համոզուեցաւ, որ աշակերտները յորդորների և պատիժների ներգործուԹեան տակ փոքր միջոց ուղիղ նստելուց յետոյ՝ նորից ընդունում են մարմնոյ վատ դրուԹիւն՝ չընայելով, որ նոքա շօշափելի կերպով աշխատում են հետու մնալ այդ՝ այսպէս անուանեալ վնասակար սովորուԹիւնից»։ Բժիշկները առաջինը եղան, որ աւելի լուրջ կերպով ուշադրուԹիւն դարձրին մանուկների սովորուԹեան վերայ, որով նոքա ընդունում էին մարմնոյ անբնական դրուԹիւն, և հաստատեցին, որ դորա պատճառը ոչ ԹէԹ մանուկների անփոյթուԹիւնն է միայն, այլ ԹէԹ նա պայմանաւորվում է և այլ աւելի նշանաւոր և մանուկներից կախում չունեցող պատճառներով։ Սորա հետևանքն եղաւ այն, որ երևեցան դրականուԹեան մէջ այնպիսի յօդուածներ, որք ցոյց են տալիս դպրոցների սեղանների և նստարանների անհամապատասխան կազմուԹիւնը, Փինկը, Շրիբերը, Շրաուբէն, Պաստաւանը, Ֆրէյհանգը և Լանգէն իւրեանց յօդուածների մէջ հետևեալ եզրակացուԹեանց եկան. 1) Սեղանները այլ և այլ դասատանց մէջ այլ և այլ մեծուԹիւն պէտք է ունենան, 2) աշակերտների ոտները չըպիտի կախ ընկած մնան, այլ պէտք է ներուին կամ նպատակայարմար կերպով շինուած ոտների տեղերին և կամ յատակին, 3) նստելու տեղը լայն պէտք է լինի, 8—10 մատնաչափ. 4) սեղանը պէտք է այնքան բարձր լինի, որ նորա եռևի եզրը, այսինքն այն եզրը, որ դարձրած է դէպի աշակերտը, հասներ մինչև աշակերտի ստամոքսը կամ որ աշակերտը ուղղահայեաց Թողնուած ուսի ակամայից շարժողուԹեան ժամանակ, կարողանար յարմար կերպով արմունկները սեղանի վերայ դնել, 5) մէջքի ներման համար պէտք նստարանները Թիկունք ունենան։ Բայց այս պահանջները ո՛չ բոլորովին օգնում էին յարուցուած հարցի որոշմանը։ Միայն 1863 ԹուԹին ԵրևեցաւՅ Յիրիսի դօկտօր Ֆարների հետևնակուԹիւնը, որ դպրոցական սեղանների և նստարանների բոլոր պահանջները հիմնում մարդաբազմուԹեան և ֆիզիքական կանոնների վերայ։ Ֆարները լիապէս ապացուցեց, որ աշա-

կերտների նստած ժամանակ ընդունած դրութիւնը անհրաժեշտ հետևանք է բնական յայտնի կանոնների, որոյ դէմ և փորձնեցին մանկավարժները պատերազմել, ենթադրելով, որ նոքա պատերազմում են մանուկների վատ սովորութեանց դէմ։ Ահա թէ ինչ է գրում Փարները. «աշակերտները գրելու ժամանակ՝ քարետախտակները այնպէս են առաջը դնում, որ քարետախտակի ձախակողմեան ծայրը դրուած է լինում համարեա մարմնոյ միջնագծի ձախ կողմում։ Յետոյ առնում են քարեգրիչը և ուղիղ նստելու խորհուրդներ լսելով սկսում են գրել։ Հէնց նոյն իսկ գրելու սկզբին բոլոր աշակերտները գլուխները մի փոքր դէպ առաջ և դէպի ձախ են ուղղում մի փոքր, չըփոխելով առհասարակ մարմնոյ դրութիւնը։ Սակայն շուտով բոլորի գլուխները արագութեամբ ներքև են խոնարհվում, այնպէս որ ողնաշարի սեան պարոնային մասը նշանաւոր անկիւն է կազմում նորա մէջքի մասի հետ։ Կարճ միջոցից յետոյ խոնարհվում է նոյնպէս և մէջքի ողնաշարի վերին մասը և բոլորովին կամ է ընկնում թիակների վերայ, որը պահպանվում են ուսերով։ Այս վայրկենից սկսեալ աշակերտները բաժանվում են երկու խմբերի, նայելով քարետախտակների այն տեղին, որի վերայ և նոքա այդ ժամանակ գրում են։ Այն աշակերտները, որք սկսում են նոր տող գրել քարետախտակի վերին կէսի վերայ, դառնում են արմունկների մէջ լիակատար յենման կէտ, նոցա կուրծքը թեքվում է մինչ այն աստիճան, որ յենվում է (կպչում է) սեղանին, իսկ մէջքը նուաղից ծռվում է և այդ դրութիւնը ես անուանում եմ սապատութիւն, կորաքամակութիւն։ Այս միջոցին աչքերը հեռանում են սեղանից 3—4 մատնաչափ և ուղիղ նայում են դէպի ներքև՝ տախտակին։ Այս ժամանակ յենման կէտերը լինում են կուրծքի վերին մասը, ձախ արմունկը (որ շարժվում է աւելի դէպի դուրս և բաւականին հեռանում է մարմնից) և վերջապէս աջ ձեռքը՝ ծղրիկի մի որև է տեղում։ Իսկ եթէ այն կը տիքական վայրկենում գրում աւարտում է տողը, կամ գրում է քարետախտակի ներքև ում, այն ժամանակ բնական է, որ աջ արմունկը նորա համար իբր յենման կէտ չի կարող լինել, որովհետև նա (արմունկը) բաւականին հեռանում է մարմնից և միևնոյն միջոցին այնքան է հեռանում սեղանի եզրից, որ առհասարակ չի կարող յենման կէտ լինել։ Հետևաբար աշակերտը պէտք է յենուի ձախ արմունկի վերայ միայն։ Նորանից յառաջ է գալիս «մէջքի շեղութիւն», այսինքն ողնաշարի սիւնը դէպի առաջ է թեքվում և պտտվում է իր ձգեալ առանցքի շուրջը ձախ կողմից դէպի աջ։ Իբրև յենման կէտեր ծառայում են մասամբ կուրծքի ձախ կողմը, մասամբ ձախ արմունկը, որ շատ հեռացած է լինում մարմնից դէպի ձախ և դէպի առաջ։ գլուխը թեքվում է դէպի ձախ ուսը։ աջ ձեռքը թեւանման դուրս ցցուած թիակով յենվում է սեղանի եզրին ծղրիկով կամ դաստակով։ յաճախ աչքերը հեռացած են լինում սեղանից մինչ 2—3 մատնաչափ և սաստկապէս ուղղուած են լինում դէպի աջ։ Սակայն դէպքերում աշակերտը իր տետրակը չեզ դրութեամբ է դնում,

ողնաշարի սիւնը շրջում է դէպի ձախ և յենվում է աջ ձեռքի վրայ, որ բաւական հեռանում է դէպի աջ և դէպի առաջ։ Այն ժամանակ ձախակողմեան թիակը թեւանման դուրս է ցցվում; ձեռքի ձախ դաստակը դրվում է մեղանի եղրի վերայ կամ քաշվում է դէպի ներքև»։

«Աշակերտը, շարունակում է Ֆարները, սկսում է գրել, գլուխը մի փոքր դէպի առաջ և դէպի ձախ քաշելով։ Այս շարժողութիւնը, թէ և ինքնըստինքեան աննշան է երևում, սակայն նշանաւոր է և վնասակար, որովհետև նա գլխի ծանրութեան կենդրոնը իր իսկական յենման կետից — ողնաշարի սիւնից, շարժում է դէպի մի որև է կողմը։ Երբ որ մարդս ուղիղ է նստած, այն ժամանակ նորա գլխի ծանրութեան կենդրոնը ընկնում է ողնաշարի սեան վերայ, պահպանվում է նորանով և պահվում է հաւասարակշռութեան մէջ պարանոցի մկանունքներով։ Բայց այս բոլորը կերպարանափոխվում է մի փոքր դէպի առաջ շարժուելուց։ Գլխի ծանրութեան կենդրոնը դէպի առաջ է մղվում և յեռևն է թողնում իր իսկական յենման կետը, դորա համար էլ պէտք է հաւասարակշռութեան մէջ մնայ պարանոցի յետին մասի մկանունքների անդադար ձգողութիւնից։ Եթէ որ մենք մեր մարմնոյ մի մասին տանք այս կամ մի որև է ուրիշ թեք դրութիւն, եթէ որ օրինակ մենք ձեռքներս հեռացնենք մեր մարմնից կազմելով այդպիսով մեր մարմնի հետ մի որև է անկիւն, այնպէս որ նա ստիպուած լինի պահպանուել դէլտամման մկանունքով, այն ժամանակ մենք կը տեսնենք շուտով, որ փոքր ժամանակից յետոյ մկանունքը կը դադրի և թէ այդպիսի դրութիւն առանց ուրիշ յենման կէտերի օգնութեան՝ բոլորովին չի կարող լինել։ Մենք այդ դրութիւնը կարող ենք պահպանել ոչ աւելի՝ քան 5 րոպէ, դորա համար էլ չը պէտք զարմանանք, որ մանկան պարանոցի յետին մասի մկանունքները չեն կարող պահպանել նորա գլուխը ամբողջ ժամերով։ Այս հագամանքը ի նկատի ունենալով՝ մենք հեշտ կերպով կարող ենք բացատրել մնացեալ երևոյթները։ Պարանոցի եռևի մկանունքները դադրում են. այստեղից յառաջանում է գլխի արագապէս հարուածանման խոնարհումն, որից յետոյ գլխի պահպանութեան հոգսը անցնում է մէջքի վերին մկանունքներին, որ յետ են դարձնում ողնաշարին և դառնում է աւելի ծանր, որովհետև գլուխը յետոյ պէտք կախ ընկնի լծակի աւելի երկայն ծունկի վերայ։ Այս մկանունքների դադրելով, մէջքի վերին մասը թեքվում է աւելի սաստիկ կերպով և աշակերտը ստիպուած է լինում պտռելու ուրիշ յենման կէտեր, որպիսիք լինում են ամենից առաջ մէկ կամ երկու արմունկը. նոքա պահպանում են ուսերը և թիակները, իսկ սոցա վերայ պահպանվում է ամբողջ իրանը մինչև այն ժամանակ, երբ արդէն դադրածութիւնը առաւելանալով, կուրծքը նոյնպէս մինչև անգամ յենման կէտ է դառնում։ Բնական դրութեանց այս փոփոխութիւնների մէջտղը, աշակերտը չէ զգում թէ իւր մարմինը անբնական դրութեան մէջ է գտնվում, նա չի նկատում, որ իւր մարմնի անբնական դրութիւնը աւելի ոչնչանում է, դորա համար էլ ուշք չի դարձնում այն թեթև նպաս-

տիչ միջոցների վերայ, որոց օգնութեամբ նա կարող էր պատրաստել բարեզբել։ Նա իւր մարմնի բնական դրութեամբ պահպանելու յարմարութիւնը միայն այն ժամանակ է զգում, երբ որ գործելուց յետոյ հանգստանալիս կարողանում է ըոլորովին ուղղուել, փաղցր է տեսնել, թէ մանուկները ուրախի բաւականութեամբ ձգվում են հանգստանալիս և թէ ինչպէս նոքա ողնաշարի սեան ամենակերպ որորմամբ, ուսերի բարձրացնելով և կոտրտուելով աշխատում են տալ իւրեանց մարմնին բնական դրութիւն։

Ուրեմն վերոյիշեալ բոլոր երևոյթները ոչ այլ ինչ են՝ եթէ ոչ պատերազմի արտայայտութիւնք ծանրութեան ուժի և մկանութքների ուժի մէջ բացուած, որովհետև այդ պատերազմի մէջ մկանութքային ուժը չի կարող չաղթող հանդիսանալ, ուրեմն պէտք աչ ատնել այդ պատերազմի առաջքն առնել, այսինքն պէտք գլխի վերայիշեալ սկզբնական գէպի առաջ և ձախ շարժող վիճակը կարևոր չը համարենք։

Իսկ ինչու համար են գործում բոլոր աշակերտները այդ բնազդեցական շարժողութիւնը։ Պարզ է թէ նորա համար, որ նոքա այլ կերպ չեն տեսնում իրանց դրչի ծայրը։ Երբ աշակերտը սկսում է գրել մի երես, այն ժամանակ տախտակի համապատասխան տեղը այնքան հեռացրած է լինում նորանից, որ նա ստիպուած է լինում նայել նորա վրայ սաստիկ սուր անկիւնով, որպէս զի պարզ կերպով կարող լինէր տառերը տեսնել։ Այս անյարմարութեան պատճառը սեղանների չափն է։

Փարները իւր բազմաթիւ հետազօտութեանց հիման վերայ մշակեց սեղանների նախագծեր, միշտ յարմարուելով աշակերտների հասակներին։ Փարների հնդինակութիւնից յետոյ երևեցան Ցվիցի, Գիլօմ, Հերմանի, Մէյերի, Կոնի, Ֆրէյի, Շիլդբախի և ուրիշ գիտնականների հեղինակութիւններ, որք առաջարկում էին սեղանների համար իրանց կազմած նախագծերը։ Մի կողմը թողնելով այդ նախագծերի մէջ եղած այս կամ այն պղտազանութիւնը, այնու ամենայնիւ նոքա բոլորն էլ հին սեղանների և նստարանների այս կամ այն պակասութեան առաջն առնում են անտեղի համարելով ոտների կախ ընկած դրութիւնը, սեղանի չափից դուրս հեռաւորութիւնը նստարանից, նստարանի նեղութիւնը ևլն։ Հետազօտողների մեծ մասը պահանջում է, որ ամեն մի սեղան երկու հոգու համար շինուի, որ միջոց է տալիս նոցա աւելի նպատակայարմար կերպով շինել, տալիս է աշակերտներին աւելի ընդարձակութիւն ևլն։

Ճանաչելով այս հարցի բոլոր կարևորութիւնը շատ տեղեր Գերմանիայում հրատարակեցին կառավարչական շրջաբերականներ սեղանների և նստարանների լաւ կազմութեան վերաբերութեամբ։ Մեզանում դեռ ևս ոչինչ չեմարեա թէ չեն արել այս հարցի առթիւ։ Պ. Վիլեամզկու, Էրիսմանի և Ըշչերբակովի հետազօտութիւնները ցոյց են տալիս, որ այդ գործող անձանց տեսած բոլոր դպրոցներում համարեա թէ ոչինչ հոգատարութիւն չեն արած, որպէս զի սեղանները և նստարանները գոնէ մասամբ իրէք համապատասխանէին իրանց կազմութեամբ առողջապահութեան ներկայ պահանջնե-

րին։ Աւելորդ է ասել, որ մասնաւոր դպրոցների սեղանները և նստարանները աւելի վատ են, քան թէ գիմնազեաներինը։ Ես բաղդ եմ ունեցած տեսնել շատ փոքր դպրոցներ և յաճախ տեսած եմ նոցա մէջ հասարակ հարթ հատասար սեղաններ առանց որ և է շեղ դրութիւն ունենալու և այն՝ շըրջապատուած թիկնարաններից զուրկ նստարաններով։ Այդ տեղ կային այլ և այլ հասակների տէր մանուկներ երկու սեռիցն էլ, որ տեղ փոքրահասակ աշակերտներն ու աշակերտուհիք չէր կարողանալով ոտները յատակին հասցընել, ոտների ծայրերը գցում էին նստարանների տակ եղած հորիզոնական քանոնաձև փայտեայ ձողերին։ Երբեմն նստարանների վերայ տեղէ պակասութիւնից, սեղանների մօտ աթոռներ էին դնում, բայց որովհետև աթոռները ներքևում հորիզոնական ձողեր չէին ունենում, ուստի և աշակերտները իրանց ոտները փակցնում էին աթոռների առաջի ոտներին։ Այսպէս մանուկները ստիպուած գոլով սեղմուած կերպով նստել, միայն աջ արմունկն էին դնում սեղանի վերայ, վեր բարձրացնելով աջ ուսը, իսկ ձախ արմունկը կախ էր ընկած օդում, որ դէպ քում և ձախ ձեռքի դաստակը միայն պահպանում էր շեղ կերպով դրուած տետրակը։ Սեղանների և նստարանների այս վատ և առողջապահութեան կանոններին բոլորովին հակառակ կազմութիւնը ես նկատեցի ո՛չ թէ միայն մէկ և երկու դպրոցներում, այլ համարեա թէ բոլոր մանր ուսումնարաններում։ Սակայն այդ չարեաց առաջը հեշտ է առնել. այսպէս օրինակ կարելի է պարտաւորել մասնաւոր դպրոցների կառավարողներին, այր մարդ է եղել նա, թէ կին, որպէս զի նոքա ունենան մի որ և է յայտնի ձևով շինուած սեղաններ և նստարաններ, որք գոնէ մասամբ առաջը կառնեն անպիտան սեղանների և նստարանների մանկանց առողջութեան վերայ արած վատ ներգործութեանց. կարելի է մինչև անգամ փակել դպրոցը, մինչև որ այդ պահանջները լիովին չը կատարուին։ Բայց անգամ այդպիսի մի բան չէ եղած և տեսուչները բոլորովին աչքից գցում են այդ հանգամանքը, գոնէ ես եմ տուած հարցերից համոզուեցայ, որ գիշերօթիկ դպրոցների և ո՛չ մի վերատեսչուհու նկատուած չէ եղել, որ նորա դպրոցի սեղաններն ու նստարանները վընասում են մանկաց առողջութեանը։ Իսկ իրանք վերատեսչուհիք ամենափոքր հասկացողութիւն անգամ չունին այդ հարցի վերայ, և նոցանից մեծ մասը զարմացամբ կամ ծիծաղով էին լսում իմ նկատողութիւններս այդ առարկայի վերաբերութեամբ։

Ո՛չ պակաս նշանակութիւն ունի և արհեստական լուսաւորութեան վերայ եղած հարցը։ Այս հարցի առթիւ կան շատ զանազան տեսակ կարծիքներ. կերօսինը, նաւթը, կարտոֆիլի մոմը և գազը ունին իրանց հակառակորդներն ու պաշտպանները։ Այսպիսի տարաձայնութիւնն շատ հասկանալի է, որովհետև արհեստական լուսաւորութեան վերայ խօսելիս ի նկատի է առնվում ո՛չ միայն լուսոյ արժանաւորութիւնը, ոչ թէ նորա պարզութիւնը միայն, այլ և լուսաւորութեան նիւթերի էժանութիւնը և վերջապէս այս կամ այն աչքի զանազան յատկութիւնները։ Գալէն ասում է թէ արհես-

տական լուսաւորութիւնը այն ժամանակ լաւ կը լինի, երբ որ նախ և առաջ նա ամենից շատ նմանութիւն է բերում բնական լուսաւորութեանը, որ տալիս է բաւական քանակութեամբ լոյս և չի շլացնում աչքերը, երկրորդ՝ երբ որ նա հաւասարապէս է լուսաւորում և աղօտանալով չի ցաւցընում և չի գրգռում աչքերը, երրորդ՝ երբ որ նա հեշտ է ձեռք բերվում և վառելիք չի սպառնում. չորրորդ՝ երբ նորա կազմութիւնը թանկ չի նստիլ և չի պահանջիլ դարձի լիակատար կերպարանափոխութիւն. և վերջապէս հինգերորդ՝ երբ որ այդման գործողութիւնը առողջութեան համար վնասակար, անախորժ հոտ չի տարածիլ։ Փաքիկը գալիս է այն եզրակացութեան, թէ այս բոլոր պահանջներին համապատասխանում է գազը։ Մի և նոյն եզրակացութեան գալիս է և Ֆարենհեյտպերը, ասելով թէ, արհեստական լուսաւորութեան համար առանց այլևայլութեան պէտք է գործադրուի գազ։ Մի և նոյնն են ասում և Զինբենգաբը, Ճմելցը, Լեմանը և այլ։ «Միևնոյն գնով, ասում է Ֆարենհարտպերը, գազը տալիս է լիակատար և հաւասարապէս լուսաւորութեան համար ամենամեծ քանակութիւն. այս կերպ լուսաւորութեան կազմութիւնը հասարակ է, լապտերների բոլոր բաղադրեալ մասերը վերանում են սորանով»։

Բայց տեսնենք թէ ինչ արժանաւորութիւն ունի այս լոյսը։ Լուսաւորութեան զանազան նիւթերի վերաբերութեամբ արած լուրջ հետազօտութիւններից միևն է Հէյմանի գործած հետազօտութիւնը, Նա եկաւ այն եզրակացութեան, որ արեգակի լուսից յետոյ նաւթի լուսոյ մէջ գտնվում է սպիկարի գոյների աւելի հաւասարապէս զանգուած, այն ինչ գազի և կերոսինի լոյսը աւելի շատ է հեռանում գոյների խառնուելուց արեգակի լուսոյ տակ։ Այդ պատճառով էլ գազը և կերոսինը տալիս են աւելի պարզ, և ընդ նմին աւելի շլացուցիչ լոյս, քան թէ նաֆթը։ Փորձառական եզրակացութիւնները, որ տալիս է մեզ Հէյմանը իւր փորձերից, ասում է դօկտոր Երիսմանը, հետևեալներն են. 1) Հասարակական շինութիւնները լուսաւորելու համար ամենից լաւ է գործադրել այնպիսի լուսաւորութեան նիւթեր, որք տալիս են ամենապարզ լոյս, որ դէպքում պէտք թուլացնել նորա շլացնելու յատկութիւնը կապտոտ գլանների օգնութեամբ։ Այդ լուսաւորութեան նիւթերի (գազ, կերոսին) լուսոյ նոյն իսկ պարզութիւնը վայրկենական է երևում, որ պակասեցնում է նորա շլացնելու յատկութիւնը։ 2) Միևնոյն լուսաւորութեան տակ կարող են պարապել միայն այն մարդիկ, որոց աչքերը հաւասարապէս տպաւորութիւն են ստանում լուսից, այս պատճառով դպրոցներում չպէտք գործադրուի յատկապէս լուսաւորութեան մի եղանակ. բայց դասատան լուսաւորութիւնը պէտք յարմարացնել աշակերտների աչքերի հետ գործադրելով լուսաւորութեան այլ և այլ եղանակներ։ «Իմ հետազօտութիւններից երևում է, ասում է Հէյմանը, որ ընդհանրապէս աչքերի համար հաճելի է միայն նաւթի լոյսը, և որ հաստատվում է ամենօրեայ փորձով»։ Որովհետև դպրոցների մէջ չի կարելի ներմուծել լուսաւորութեան զանազան եղանակներ, այդ պատճառով էլ բոլոր դիտական-

ները ներկայումս սկսում են առաւելութիւն տալ գազին, ընդ նմին և աւելցնելով, որ նորա շլացնելու յատկութիւնը պէտք թեթևացնել կապոյտ գլանների և գունտերի միջոցով, որ դեպքում Գրծասի Գարևնորապպի, Հորդեի Գալկի և այլ գիտնականների խօսքերով չպէտք գործածել մետաղեայ ծածկոցներ, այլ թղթից, ապակիից և ճենապակիից շինուած ծածկոցներ։ Նշանաման եղրակացութիւնից է գալիս և դօկտոր Էրիսմանը, «Ամենայն դէպս, ասում է նա, ամենայարմար և էժան նիւթը գազն է, որով կարելի է լուսաւորել հասարակական շինութիւնները, բայց այս չի նշանակում թէ նաւթ և կերոսին չըպէտք գործածել։ Պէտք չէ մոռանալ, որ նաւթ գործածելիս հարկաւոր է շատ լապտերներ, հակառակ դէպքում կորչում է նաւթի այրուելուց առացուած նուազ լուսոյ բոլոր գերազանցութիւնը։ Կերոսինը մի փոքր անյարմար է դպրոցների համար միայն այն պատճառով, որ նորա հետ շատ զգոյշ պէտք վարուել։ Գազը պակաս վտանգաւոր է, և իմ կարծիքով, գազը, եթէ որ նորանով լուսաւորելու համար գործ ենք ածում Արգանդի շոշափուկները, ամենայարմար նիւթն է հասարակական շինութիւնները լուսաւորելու համար։ Լուսոյ կանոնաւոր ընթացքին և բոցի ընթացի դողդողալը հեռացնելու համար հարկաւոր են ապակեայ գլաններ ու ծածկոցներ։ Աւելի լաւ է գործածել, ինչպէս վերևն ասացինք՝ կապոյտ ապակիից շինուած գլաններ, որոնք թուլացնում են պայծառ գոյները սպեկտրի բարձրացող տախտակները։ Զօրեղ հակապատկերից հեռու մնալու համար սենեակը լուսաւորելու ժամանակ, ծածկոցները չպէտք բոլորովին անթափանցելի լինին լուսոյ համար։ Մանուշակագոյն ապակեայ և յախճապակեայ ծածկոցները, որոնք լուսոյ գլխաւոր մասը անդրադարձնելով սեղանների վերայ, թողնում են նորա մի մասը, որ ծառայում է սենեակը լուսաւորելու համար, պէտք նախադասելի համարուին քան մետաղներից շինուածները։ Ճկոյց, լապտերի բոցը պէտք գտնուի համապատասխան բարձրութեամբ աշակերտների գլխների վերայ, բայց ո՛չ այնքան բարձր, որ նորա սեղաններից հեռաւորութեան պատճառաւ կորչէր լուսոյ պարզութիւնը։ Ինչ որ վերաբերում է լուսաւորութեան ուժին, Գարևնորապպ իւր «դպրոցական առողջապահութիւն» վերնագրով յօդուածում պահանջում է, որ գազային մի բոցը բաժին ընկնէր 4—8 աշակերտների վերայ»։

Դժբաղդաբար մանկավարժների առ արհեստական լուսաւորութիւնն ունեցած յարաբերութեան մասին նոյնը պէտք ասել, ինչ որ մենք արդէն ասացինք նոցա առ առողջապահութիւնն ունեցած բոլոր յարաբերութեանց մասին։ Այս տեսակ յարաբերութիւնը չափից դուրս անհոգութիւն է։ Ամենից առաջ պէտք նկատել, որ գազը իրր լուսաւորութեան նիւթ բոլոր մեծ դպրոցներում մուտք չէ գործել, մի կողմը թողնելով մանր դպրոցները, ուր սենեակները ինչ բանով էլ ասէք՝ լուսաւորում են. սկսեալ հոտած ձրնգուէ մոմից մինչև նոյն և նման նաւթը, որ պէտքում և լուսաւորութիւնը շատ նուազ է լինում և ի հարկէ սաստիկ կերպով ներգործում է աշակերտների աչքերի վերայ։ Բայց մինչև անգամ և այնտեղ, ուր գազ

կայ լուսաւորութիւնը չափից դուրս անբաւարար դրութեան մէջ է երեւում։ Երբ յիշեա, ասում է Կոնը — որ այնքան շատ մուխ դպրոցական սենեակներ կան, որ նոցա մէջ ամենայն օր ձմեռը 3—4 ժամ շարունակ գազ է վառվում, այն ժամանակ լուսնկատար իրաւունք ունիս հարցնելու մի՞թէ ամեն տեղ գազային լուսաւորութիւնն այնպէս է յարմարցրած, որ գրքերն ու տետրակները բաւականաչափ լուսաւորուած լինէին։ Դժբաղդաբար, բոլոր դասատները տեսնելուց յետոյ այդ հարցին պէտք բացասական պատասխան տալ։ Ա՛յն դասատներից, որոց մէջ կան 80—90 աշակերտներ, առհասարակ լինում են 2, 3 կամ 4 գազային լապտերներ։ Այս լապտերները այնպէս վատ են շինուած, որ շատ աշակերտների մարմնի վերին մասի ստուերը ընկնում է թղթի վերայ և դրա համար էլ նոքա ստիպուած են աշակերտին պատերը գանազանելու համար շատ մօտիկ թեքուել տետրների մօտ։ Համարեա թէ ոչ մի դասատան մէջ չկան ծածկոցներ և ստուերաթղթեր, այնպէս որ լոյսը տարածվում է միայն սենեկի մէջ և չի կեդրոնանում սեղանների վերայ։ Ա՛յսպիսով գլաններով չշրջապատուած բոցի աւելորդումը պատճառում է աչքերին վնասակար գրգռումներ։ Արհեստական լուսաւորութեան գործը վատ թուեցաւ և գօկտոր Էրիսմանին։ «Ինչ որ վերաբերում է իմ հետազօտած բոլոր դպրոցների դասատանց արհեստական լուսաւորութեանը, գրում է նա, պէտք է ասել, որ 135 սենեակներից 80 ը միայն մատակարարուած են լապտերներով, իսկ 55 դասատանց մէջ չկայ և ոչ մէկ լապտեր։ այս իրողութիւնը առաւել այն պատճառով զարմանալի է, որ պատերի կլիմայի տակ շատ յաճախ առաւօտը և մինչև անգամ ցերեկը կարևորութիւն է ներկայանում արհեստական լուսաւորութեանը դիմելու։ Ինձ ասացին, որ խաւար և թուղպ օրերը ուսուցիչները չեն ստիպում աշակերտներին ո՛չ գրել և ո՛չ կարդալ։ բայց օրինիցեան այդ ժամերին երբեմնապէս առարկաների պասեր են պատահում, որ դէպքում կարևոր է լինում կարդալ և գրել։ այն ժամանակ չնայելով վարչութեան և ուսուցչաց ցանկութեանը, աշակերտները այնուամենայնիւ երբեմն հարկադրուած են լինում կարդալ և գրել։ Միևնոյն դասատանց մէջ, որտեղ լապտերներ կան, ոչ մի տեղ չէր պահպանուած Փարիզտրապպի կանոնը, որոյ զօրութեամբ 4—8 աշակերտներին պէտք բաժին ընկնի մէկ գազային բոց։ իսկ կեղտոնով լուսաւորութեան ժամանակ, իհարկէ, 4 աշակերտի վերայ պէտք գայ գոնէ մէկ լապտեր։ Համարեա ամենայն տեղ դիշերօթիկ աշակերտները աշխատում են անբաւականացուցիչ լուսաւորութեան տակ, օրինակ Ա. գիմնազիայում դիշերօթիկները աշխատում են եռալոյս լապտերի տակ։ Եւ թէ որ դասատան մէջ դիշերօթիկների թիւը քիչ է, այն ժամանակ այս լուսաւորութիւնը էլի մի կերպ կարող է բաւականացնել։ իսկ եթէ մի սենեակում 8 աշակերտից աւելի են աշխատում, այն ժամանակ հարկաւոր է և մի այլ լապտեր։ Բ. գիմնազիայում դիշերօթիկները աշխատում են պատի կերոսինի լապտերներով, 4—5 աշակերտների վերայ գալիս է մի լապտեր։ Այս լուսաւորութիւնը բաւականին բաւարարիչ է։ Գ. գիմնազիայում դիշերօթիկ

ները աշխատում են բոլորովին հարթ հատատար սեղանների վերայ, երկլոյս և եռալոյս լապտերներով. բարձր դասատներում մեկ եռալոյս լապտերը գալիս է մօտաւորապէս 18 աշակերտի վերայ. իսկ ստորին դասատներում մեկ երկլոյս լապտերը—14 աշակերտի վերայ։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ այս լուսաւորութիւնը բաւական չէ։ Դ. գիմնազիայում կերօսինով են աշխատում. Ա. Բ. և Գ. դասատներում մեկ լապտերը գալիս է մօտաւորապէս 10 աշակերտի վերայ. Դ. և Ե ում՝ 8 աշակերտի վերայ և Զ. դասատան մէջ՝—3 ի վերայ։ Ստորին դասատներում պէտք լուսաւորութիւնը երկպատկել այնպէս, որ 4—5 աշակերտի վերայ մեկ լապտեր գար։ Ե. գիմնազիայում գիշերօթիկները աշխատումեն սագի ճրագուով։ Լուսաւորութիւնը սակաւ է լապտերի սակաւութեան պատճառաւ, այնպէս որ ստորին դասատանց մէջ մեկ լապտերը գալիս է 7 աշակերտի վերայ, իսկ վերջիններում—6 աշակերտի վերայ։ Ապացուցելով, որ լուսաւորութեան այժմեան միջոցներով և դրութեամբ վնասվում են աշակերտների աչքերը և ի նկատի ունենալով այն հանգամանքը, որ լուսաւորութեան լաւացնելը մեծամեծ ծախսեր չի պահանջիլ, մենք իրաւունք ունինք սպասել և պահանջել այդ դպրոցից»։

(Կէս-բոնակով) (Թարգմ.) Մ. Տ. Սարգսեանց.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՀԱԶԱՐ ՈՍԿԻ.

(Ռոմէրնէյ).

Մի հարուստ մարդ մտածէց հազար ոսկի բաժանել աղքատներին, բայց չէր իմանում թէ ո՛րպիսի աղքատների տայ այս դրամները. նա քահանայի մօտ եկաւ, և ասումէ. «Տէր Հայր, ես կամենումեմ աղքատներին հազար ոսկի բաժանել և չէգիտեմ ո՛րպիսի աղքատների, որ արդարև օգնութեան կարօտ լինին։ Առէք դրամները և բաժանեցէք ում կամիք»։

Քահանան ասաց. «Փողերը շատ են. ես ևս չէգիտեմ ում և որքան տամ, կարող է լինել, որ ես մէկին շատ կրտամ, իսկ միւսին սակաւ։ Ասացէք, որպիսի աղքատների և իւրաքանչիւրին ինչքա՞ն պէտք է տալ ձեր փողերից»։ Հարուստն ասաց. «Եթէ դուք չէգիտէք ում պէտք է տալ փողերը, Աստուած գիտէ. առաջին անգամ ո՛ր աղքատը կըդայ ձեզ մօտ, բոլոր դրամները նորան տուէք»։

Ծուխերի մէջ կար մի աղքատ մարդ. նա շատ զաւակներ ունէր, իսկ ինքն հիւանդ էր և չէր կարողանում աշխատել. Աղքատը միանգամ կարգումէր Սազմոսը, և նորան հանդիպեց հետևեալ խօսքը «Մանուկ էի և ծե-

բացայ, և ոչ տեսի զարդարն արհամարհեալ և ոչ զգաւակ նորա թէ մուրա-նայ հաց»։

Աղքատը մտածեց, ահա ես արհամարհուած եմ Աստուծոյ առաջ, բայց ոչինչ չար գործ չեմ բռնել։ Գնամ քահանայի մօտ, հարցնեմ նորանից թէ ինչպէս է որ այս անձիւշտ է գրուած Սուրբ Գրքում։

Գնաց քահանայի մօտ.

Քահանան տեսնելով նորան, մտածեց. «առաջին անգամ այս աղքատը եկաւ ինձ մօտ», և առաց նորան բոլոր հազար ոսկին՝ որ յանձնել էր իրան հարուստը։

ԱՍՈՒՄԵՆ ՄԻԱՑՆ.

Ո՞ր ուսումնական բանիբուն մարդը,
Կամ ուսումնասէրտ երիտասարդը
Չէ ասել խօսքով և չի էլ ասում՝
Կրթութիւն է պէտք ազգս գիւղացուն։

Առումն դժուար, բայց գեղջուկ ազան
Դարձեալ է միշտ նոյն թշուառ դրութեան.
Դպրոց չէ գնում, ուսում չէ առնում,
Եւ այդպէս էլ նա անկիրթ է մնում։

Ո՞ր մի ընչաւէտ վաճառականը
Առանց բանալու քսակի բերանը՝
Չէ պնդում տանը, հրապարակում,
Թէ պէտք է օգնել աղքատ գիւղացուն։

Առումն դժուար. բայց խեղճ գիւղացուն
Երբոր խանութի միջին են գանում,
Խօսքը՝ խօսք է միշտ և խօսք է մնում,
Վաճառականը շահն է մոռանում։

Ո՞ր արհեստաւոր մեր քաղաքացին
Տեսնելով խեղճուկ գիւղացիներին,
Ամենքի մօտ էլ չէ պնդում, ասում՝
Թէ արհեստ է պէտք գիւղացու որդուն։

Առումն դժուար, բայց երբ գիւղացին
Առաջարկում է հինց նոյն վարպետին

Իւր գեղջուկ տղան աշակերտ առնել,
Վարպետը՝ այլ մարդ՝ չոր կուռք է դարձել։

—

Ո՞ր կալուածատէր հարուստ իշխանը
Խօսքով չէ բացել քսակի բերանը,
Իւր ընկերների, ընտանեաց մօտը՝
Չէ քաշել մեր խեղճ գեղջկի կարօտը։

Աւա՜ղն ինձ, բայց երբ գիւղացին
Դիմումէ այդ իսկ վսեմ իշխանին,
Թուք ու անարգանք է սեւնում նա միշտ,
Եւ ամենից շատ՝ նրանից է կրում վիշտ։

—

Ո՞ր մի բժիշկը միշտ կարեկցաբար
Հոգոց չէ հանել գիւղացու համար,
Չէ խոստովանել և չէ խոստանում՝
Թէ պէտք է գթալ թշուառ գիւղացուն։

Աւա՜ղն ինձ, բայց երբ գիւղացին
Աղաչում, խնդրում է մեր բժշկին,
Օգնել մինուճար իւր տկար որդուն՝
Բժիշկն ասում՝ ուստի՞ բուսար դուն։

—

Ասումեն, ասում՝ շատ բան են ասում,
Ասելով միայն օրեր են անցնում,
Օդը վարակուած է ասելներով,
Եւ վարակումէ ասելու ցաւով։

Մեր խեղճ գիւղացուն ցարդ ո՛վ է օգնել,
Կամ վերքի վերայ սպեղանի դրել։
Պէտք է հառաչէ թշուառ գիւղացին,
Հեծէ ու կոծէ՝ մինչ իւր օր վերջին....

Գրաշար Ներսէս Տէր Աւետիքեանց։

ՍՅԼ ԵՒ ՍՅԼ-Ք

Նոր Նախիջևանցի Պ. Դաւիթ Տէր Մանուէլեանցը իրև կտակակատար 22 ն Փետր. տարւոյս յայտարարութեամբ ուղարկել է յանուն Սինօդի հանգուցեալ ի Տէր Նոր Նախիջևանցի Եղիա Պօղոսեան կիւմիւշեանի ի նպաստ Մայր Աթոռոյս կտակած մի հազար րուբլի։

—

Նոր Նախիջևանի Ձալթր գիւղի բարեպաշտ հասարակութիւնն առաքել էր յանուն Վեհ. Կաթուղիկոսի 9 հազար րուբլի ի նպաստ ճեմարանի Մայր Աթոռոյս։

—

Ղզլարի հոգևոր կառավարութիւնը անցեալ Դեկտմ. 29-ին յայտարարութեամբ յանուն Սինօդի ուղարկել է մի հարիւր րուբլի ի նպաստ ճեմարանի Մայր Աթոռոյս, նուէր բարեպաշտուհի Տիկին Եղիսաբէթի Սիմէոնեան Ղարիպեանց՝ ի յիշատակ հանգուցեալ ի Տէր ամուսնոյ իւրոյ Մկրտչի Իգնատիոսեան Ղարիպեանց։

—

Սիմֆերօպօլի Մարտիրոս քահանայ Ներսիսեանը ուղարկել է յանուն Սինօդի ի նպաստ Մայր Աթոռոյս քսան և հինգ րուբլի նուէր Սիմֆերօպօլի բարեպաշտուհի Տիկին Գայիանէի Ջաւարչեան։

—

Գանձակի Հոգ. Կառավարութիւնը ուղարկել է երեսուն րուբլի ի նպաստ վերանորոգութեան Մայր տաճարի Ս. Էջմիածնի, նուէր Գանձակեցի Արժ. Երիցայր քահանայի Թումանեան, որ ի յիշատակ իւր հանգուցեալ մօր՝ Մարիամայ Թումանեան՝ առաջարկել էր Գանձակի հոգևոր կառավարութեան մի հարիւր րուբլի, երեսունը՝ Ս. Էջմիածին ուղարկելու, մնացեալ չորս-եւթսուն րուբլին՝ Գանձակի Ս. Յովհաննէս եկեղեցու Երեսփոխանին շահեցնելու ի նպաստ եկեղեցւոյն, և դառն բոբլին ևս տեղւոյն երկսեռ հոգ. դպրոցներին յանձնելու։

—

Բաքուայ գործակալ Արժ. Խորէն քահանայ Միրզաբէկեանցը տարւոյս Յունվարի 29-ին ներկայացրել է Սինօդին ներկայ տարւոյս համար տասն րուբլի ի նպաստ ճեմարանի նուէր Բագուեցի Պ. Խաչատրի Կիրկեան՝ ի յիշատակ հանգուցեալ որդւոյ իւրոյ Յարութիւնի. յիշեալ պարոնը 1883 թուից հետէ տարեկան տասն րուբլի նուիրուած ունի նպաստակով։

—

Շնորհակալութեամբ ստացանք

«ԿՐՕՆԻ ԴԱՍԱԳԻՐՔ» երկրորդ տարւոյ ուսումն եկեղեցական —

Ծխական ուսումնարանների համար. պատկերազարդ, (համաձայն ամենայն Հայոց Վեհափառ Կաթուղիկոսից հաստատած ծրագրի)

Աշխատասիրեց Գիւտ Քահանայ Աղանեանց, Տփխիս, Ցովհաննէս Մարտիրոսեանցի տպարան. գինն է 25 կոպեկ.

Գրքոյկը բաղկացած է 54 երեսից, և բաժանվում է երկու մասն. Առաջին մասնում գրուած են ևօթն հատ աղօթքներ, իսկ երկրորդ մասում՝ տէրունական տօների համառօտ պատմութիւնները. լեզուն դիւրըմբռնելի է.

—

«Ի Այ քեզ օյին» Վօդեվիլ մէկ արարուածով հեղինակութիւն Հանգուցեալ Գ. Երեցփոխեանի. «Ի Մի համեստ պատասխան» Բարսեղ Քեամալեանի. Հրատարակութիւն Պ. Բարսեղ Քեամալեանի. Թէ Վօդեվիլի ընտրութիւնը և թէ «Մի համեստ պատասխանը» շատ յաջողուած չեն, և չեն ծառայում իրանց նպատակին. Վօդեվիլի բովանդակութիւնն է՝ ծաղրել հայերի անհմտութիւնը և մի շահասէր վաշխառու Թիֆլիզեցու՝ դարձեալ անհմտութիւնն ու միամտութիւնը. Այդ մասն թէ որպէս բեմական մի գրուածք և թէ որպէս ընթերցանութեան մի գիրք՝ ոչինչ բարոյական ազդեցութիւն չի կարող թողնել. իսկ «Մի համեստ պատասխանը» գրուած է շատ յանձնապատան կերպով.

—

Ստացանք «Հանդէս ամսօրեայ» ամսագրի տարւոյս Փետրվար և Մարտ թուները. Փետրուար ամսաթերթի մէջ ուշադրութեան արժանի են «Պերսեպօլսոյ սեպագիրք», Ց. Հանուշ Հայադէտ և Վալիցիոյ Հայոց գաւառապետը» և «Քրիստոնեայ Հայաստան և իւր գրականութիւնը» յօդուածները. Իսկ Մարտ ամսաթերթի մէջ՝ ուշադրութեան արժանի են «Պատմութիւն Հայ լրագրութեան», և «Հայերէն քանի մը բառերու որոշ նշանակութիւնը»,— «Հանդէս Ամսօրեայ» թերթը առ հասարակ ընտիր յօդուածներ պարունակելով լաւ ընդունելութեան արժանի է.

—

Ստացանք նաև «Տնտես» ամսօրեայ հանդէսի 1, 2, և միասին կազմած 3 ու 4 թուները. Տնտեսը հրատարակվում անցեալ 1886 ի Հոկտեմբեր ամսից. Նպատակն է տնտեսագիտութիւնը մատչելի կացուցանել Հայ հասարակութեանը. Տնօրէն խմբագրապետ՝ Պ. Եղիա Տէմիրճիպաշեան. Հրատարակվում Կ. Պօլսում. բաժանորդագրութիւնը 10 դահեկան է Կ. Պօլսում, գաւառների և օտար երկրների համար 13 դահեկան.

Բաժանորդագրութեան համար պէտք է դիմել Զիվէր պէյ խան. թիւ 13, Քիւրքճիլար փողոց, Վալաթիա. (Կ. Պօլիս).

—

„ՄԱՆԿԱՎԱՐԺԱՆՈՑ“

Մանկավարժական և գրականական ամսագիր. Դ. տարի, Թիւ 1. Մարտ 1887 ամի՝ Ս. Պետերբուրգ։

«Մանկավարժանոց» ամսագիրը հրատարակվում է Մայր Աթոռոյս միաբան՝ Արժ. Խորէն Ծ. վարդապետ Ստեփանէի խմբագրութեամբ։

Հայր Խորէն Ծ. վարդապետ Ստեփանէ մօտ 25 տարի է որ յայտնի է մեր գրականութեան մէջ, Հ. Խորէն ստանալով բարձրագոյն կրթութիւն Մոսկվայի կայսերական Համալսարանում լեզուաբան պատմաբանի կանդիդատի կոչմամբ վերադարձաւ Թիֆլիզ՝ միևնոյն ժամանակ սկսեց եռանդուն գործունէութիւն ուսուցչական և գրական ասպարիզում և սկսեց շարունակել Պ. Մարկոս Աղաբէկեանի «Նուռնկ Հայոց աշխարհի» ամսաթերթը վերնագրով «Հայկական աշխարհ»։ Նոյն Հ. Խորէն այժմ կարդաւած լինելով Պետերբուրգի մէջ Փոխանորդ շարունակութիւն «Մանկավարժանոցը»։ կասկած չկայ՝ որ թէ խմբագրողի անձն իւր ուսումնական կոչմամբ և թէ տեղը քաջ երաշխաւոր են գործի յաջողութեանը։

Մանկավարժանոցի առաջին թիւը բացառապէս նուիրած է օտարերկրեայ Հայոց արդի կեցութեան ուսումնասիրութեանը, և բովանդակութիւնն է։

1. Դպրոցի ոգին.

2. «Լազիստանի Հայեր»։ այս յօդուածի մէջ՝ յօդուածագիրը յայտնում է որ Լազիստանում կան քրիստոնեայ յոյներից և Հայերից ըստ երևութին մահմետականացածներ, որոնք ֆէֆէներ են կոչվում. այս կէսկէս Հայերը 30 տարի առաջ կրօնի վերաբերութեամբ ազատութիւն ստանալով՝ դիմեցին մայր եկեղեցուն. սոցա վիճակը պէտք է հասկանալ այն երկու խօսքով որով վերջացած է յօդուածը։ «Պէտք անհրաժեշտ շատ՝ բայց դրամ՝ երբէք»։

3. «Մի երկու խօսք Տրապիզոնի թեմի կրթական վիճակի առթիւ»։ այս թեմի Հայոց թիւը 45 000 է հասցրած. կրթական վիճակը խղճալի դրութեան մէջ է երևում. նոյն ինքն Տրապիզոն քաղաքի համար գրում յօդուածագիրը. «դալով առաջնորդական քաղաքին՝ պէտք է ասած որ նա էլ բաւականին կաղում է»։ Նիւթական կարողութիւն ունեցող Հայերը իրանց որդիքը ուղարկում են Կարին Պ. Սանասարեանի Վարժարանը կամ Տրապիզոնում հաստատուած Միխիթարութեանց և կաթոլիկ Քրիստեների դպրոցը՝ որ աւելի բարեկարգ է եղել քան Հայ դպրոցները։

4. «Օտարակրօն հաստատութիւններ Կիլիկիայում»։ Այնթապ քաղաք. մի պանդուխտ զանազան կրօնափոխների. 8000 բուն Հայ, 3500 Հայ բողոքական, կան և Հայ կաթոլիկներ և Հայ եպիսկոպոսականներ։ Բողոքականները ունին մի բարձրագոյն դպրոց (կոլէժ) ուր բուն Հայեր ևս են ուսանում. Հայ կաթոլիկները թուով 50 են, Ֆրանչիսկեան կաթոլիկ կրօնաւորները հաստատել են մի եկեղեցի և մի դպրոց՝ ուր յաճախումն երկտեղ 200 ի մօտ աշակերտներ, որոնց մեծագոյն մասը Հայեր են, Հայ եպիսկոպոսականներ — (անգլիական եկեղեցուն պատկանողներ) 20 — 30 տուն։ Մարաշ.—3000-ի մօտ բողոքական

հայեր, որոնք ունին աստուածաբանական մի վարժարան և մի կօլէժ օրիորդաց։ Կաթոլիկ Հայեր 4000 անձն, ունին մի քանի դպրոցներ լատին Ֆրանչիսկեանների խնամոց տակ, Եպիսկոպոսականք 100 տուն։—Ազգա. ղողղրականք՝ 2000 հոգի. Հայ գիւղերում ևս տարածուած են կաթոլիկ և ղողղրական քարոզիչներ։

6. «Թուրքիոյ և առանձինն՝ կ. Պոլսոյ Հայ ժողովրդեան վիճակը»։ որ նոյնպէս անմխիթար գոյնով է նկարագրուած։

7. «Ազգարար» անդրանիկ Հայ ամսագիր և

8. Հայաստանի աշխարհագրական և ժողովրդական մատենագրութիւն։ Մանկավարժանոցի տարեկան գինն է էֆէ ւ-ըլէ կանխիկ։ Ցաջողութիւն ենք ցանկանում։։

ՊԱՏՏՕՆԱԿԱՆՔ։

ԴԻՒԱՆ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ.

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Մարտի ընդ Համարաւ 133՝ Հաստատեցան ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արականաց ուսումնարանի Սուրբ Աստուածածնին, և երկդասեան արականաց ուսումնարանի Սուրբ Փրկիչ եկեղեցեաց Հայոց Աղէքսանդրապօլ քաղաքի՝ պատուելիք՝ Սարգիսն Խոյեցեանց, Արամն Մատակեանց, Յակովբն Ադուլեանց, Աղաբէկն Ջանլաթեանց և Գրիգորն Վէքիլեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 10 Մարտի ընդ Համարաւ 134՝ Հաստատեցան ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան Սահակեանց օրիորդական դպրոցի ուսումնարանի Սուրբ Նշան եկեղեցւոյ Հայոց Աղէքսանդրապօլ քաղաքի՝ պատուելիք՝ Պետրոսն Զիլինղիրեանց, Յովհաննէս Կոստանեանց, Մահտեսի Կարապետն Իւղբաշեանց և Յարութիւնն Յարութիւնեանց։

—

Կոնդակաւ Վեհ. Հայրապետի Ազգիս ի 14 Մարտի ընդ Համարաւ 142՝ Հաստատեցան ի պաշտօն Հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միդասեան արականաց ուսումնարանի Սուրբ Գէորգ եկեղեցւոյ Հայոց Ջուղա գեղջ՝ բարեկրօն Վրթանէս քահանայն Տէր Պօղոսեանց և պատուելիք երեցփոխան Ռուստամն Մատթէոսեան և Գալուստ Մելիք Ստեփանեան։

—

Կոնդակաւ Վ.Հ. Հայրապետի տղդիս ի 14 Մարտի ընդ համարաւ 143՝ հաստատեցան ի պաշտօն հոգաբարձութեան եկեղեցական-ծխական միգամեան «Սրբոց Թարգմանչաց» արականաց ուսումնարանի Հայոց Հատրութ գեղջ՝ բարեկրօն Սահակ քահանայն Տէր Ոսկանեանց և պատուելիք՝ երեցփոխան Գրիգորն Հայրապետեան Զարկարեանց և Խուժադաղիշն Աղաբեկեան Լալայեանց։

Ի ՓԵՏՐՎԱՐ ԱՄՍՈՑ ՕՐԱԳՐՈՒԹԵԱՆՑ ՍԻՆՕԴԻ.

ՎԱՐՉԱԿԱՆՔ.

27 Փետ. Սինօդը հաստատեց Ղամախուոյ Կոնսիստորիայի առաջարկած Բահչեան գիւղի եկեղեցւոյ վերանորոգութեան համար ընտրուած վերակացուքը, որք են Աւետիս Հայրապետեան, Յոսեփ Գրիգորեան, Սաղաթիել Ղազարեան և Առաքել Պետրոսեան. որոնք տեղւոյն քահանայի վերահսկողութեամբ եկեղեցւոյ դրամից մինչև 150 րուբլի պէտք է գործադրեն եկեղեցւոյ վերանորոգութեան համար, յետ աւարտման՝ ծախուց ժապաւինեալ տօմարը առաջարկելով Կոնսիստորիային ի զննութիւն։

—

9. Փետր. Սինօդը Արժանապատիւ Խորէն Ծայրագոյն վարդապետ Ստեփանէին նշանակեց փոխանորդ և նախանգամ Ս. Պետերբուրգի Հոգևոր Կառավարութեան Հայոց, պատուիրելով նորան հսկել Ս. Պետերբուրգի և Մոսկվայի Հայոց եկեղեցեաց ներքին և արտաքին բարեկարգութեանց, նոյնպէս և հոգևորականների վերայ, փոյթ ունելով եկեղեցեաց պայծառութեան։ Սինօդը իւր այս որոշումն ծանոյց Նոր-Նախիջևանի և Բեսարաբիոյ Կոնսիստորիային, Մոսկվայի և Պետերբուրգի Հոգևոր Կառավարութեանցն գիտութիւն։

—

6 Փետր. Սինօդը Երևանայ Հայոց Կոնսիստորիայի յայտարարութեան համեմատ՝ թոյլ տուեց թաղել Երևանու Կաթուղիկէ Ս. Աստուածածնի եկեղեցու գաւթում, Երևանցի Հանգուցեալ Մկրտիչ Սանահեանցին՝ որ նուիրական կարգաւ կտակել էր նոյն եկեղեցու անուամբ հինգ հրպակ իրանց ներքնայարկ նկուղներով, նոյն եկեղեցւոյ արևմտեան կողմը իւր ծախքով զանգակատուն կառուցանել և ի յիշատակ իւր Հանգուցեալ Նիկողայոս որդու՝ Երևանի Թեմական դպրոցում իւր հաշուով երկու աշակերտ պահել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս տեսաւ «ՁԵՌՆԱՐԿ ԿՐՕՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ» աղօթքներ և բարոյական պատմուքիւններ առաջին տարուայ դասընթաց Հոգ. երկսեռ Ծխական ուսումնարանաց, աշխատասիրուքիւն Սարգիս Քահանայի Ագաջանեանց. գինն է 15. կօպ.

Վաճառվում է Թեմական և Հոգ. Կառավարութեանց Առեանների և Տպարանական ծողովում:

Մամուլի տակից դուրս եկաւ Ձեռաց ԺԱՄԱԳԻՐՔ, խոշորատառ, ընտիր տպագրութեամբ և թղթով, ցանկացողք թող դիմեն Թեմական Առեաններ, Տփխիս Կենտրոնական գրավաճառանոց, Երևան Պ. Կարապետ Դադաժեանի խանութ, Ագէքսանդրապօլ՝ Յայկոյ Կոլկասու գրավաճառանոց, և Տպարանական ծողովին. գինն է 2 րուբլի:

Շուտով մամուլի տակից դուրս կըգայ «Արարատ»ից արտատպուած Կարնոյ Եպիսկոպոս Գեր Տ. Մաղաքեա Օրմանեանի

«ԱԹՈՌ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ»

պատմական հետազօտուքիւնը: Ինչպէս ընթերցողք տեսան՝ Նորին Գերապատուութիւնը նպատակ է ունեցել այս իւր աշխատասիրութեամբ ապացուցանել Հայաստանեայցս եկեղեցւոյ աղատութիւնը պատմական վաստերով՝ որոնք բազմահմուտ երկասիրոյի ջանքով լուսաբանուած անվիճելի են կացուցանում Հայաստանեայցս եկեղեցւոյ անկախութիւնը:

ԲԱՌՆԱԲԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԷՐ ՅՈՎՍԷՓԵԱՆ

Հանգեաւ ի Տէր.

Հանգուցեալը ծնուած լինելով Գանձակում՝ յարբունս հասակի հասնելուց յետոյ իւղ է ուսնենում կրօնաւորուիլ, և այս իսկ պատճառով դիմումէ զանազան նշանաւոր վանքեր, և վերջապէս Երուսաղէմայ Ս. Յակովբայ վանքում ընդունելումէ միաբան, հուսկ ուրեմն Սարկաւագ ձեռնադրուելով՝ կարգվումէ Ս. Յակովբայ վանուց մէջ լուսաբար: Երկար ժամանակ այս պաշտօնը վարելուց յետոյ ձեռնադրութեամբ հանգուցեալ ի Տէր Յովհաննէս պատրիարքի տեղւոյն 1857 թուին ձեռնադրվումէ Աբեղայ. Ս. Յակովբեանց վանքում զանազան պաշտօնները է վարում, և Երուսաղէմին վիճակեալ տեսչութեանց մէջ ժամարարի պաշտօն և այ վարելուց յետոյ Վ.արդապետական մանաւանդ իշխանութիւն ստանալով՝ կարգվումէ Դամասկոսի տեսուչ. այս իւր պաշտօնավարութեան ժամանակ՝ ի հիմանէ վերաշինումէ Հայոց Եկեղեցին՝ որ 1860 թ. խռովութեան ժամանակ քանդուել էր Տաճիկներից. երկար ժամանակ վարումէ Դամասկոսի տեսչութեան պաշտօնը, և վերադառնալով Երուսաղէմ կարգվում է տեղւոյն վարչական ժողովոյ անդամ: Հանգուցեալը թողնում է Երուսաղէմը և գնալով Կ. Պօլիս՝ ստանում է Ծայրագոյն վարդապետական

իշխանութիւն և կարգվում Աբաբկերի առաջնորդ։ Յետ այնորիկ նորից գնում է Երուսաղէմ և վերջապէս առանձնանում է Արշնիի Ս. Աստուածածնի վանքում։

Վերջին արեւելեան պատերազմից յետոյ 1878 թուին գալով Մայր Աթոռս՝ հանգուցեալ ի Տէր Գէորգ Դ. Կաթողիկոսից նշանակուեց Մայր Տաճարի մէջ ժամօրհնող, և օրինակելի ժրութեամբ համարեա իննն տարի վարելով նոյն պաշտօնը՝ ամսոյս 21-ին առաւօտը վաղ քաջ, ժամը 4-ին ի հասակի վաթսուն ամաց կնքեց իւր մահկանացուն, և պատշաճաւոր յուղարկաւորութեամբ ամփոփուեց Մայր Աթոռոյս միաբանից գերեզմանատան մէջ։

Հանգուցեալը իւր մահից յետոյ թողեց միաբանութեանս մէջ առաքինի մարդու յիշատակը, և ազգիս ընթերցասէր մտին մի հետաքրքիր վաստակ՝ «Յաջորդութիւն պատրիարքաց Երուսաղէմի ի Յակովբայ առաքելոյ Տեառն եղբօրէ մինչև ցմեզս ժամանակ, տպեալ ի Կ. Պոլիս 1872 թուին»։ Այս հետաքրքիր աշխատասիրութիւնը բաղկացած է 106 միջակագիր երեսից՝ բաժանուած երկու գլուխների յատուկ ծանօթութիւններով. «Առաքելական յաջորդութիւն Հայաստանեայցս Ս. Եկեղեցւոյ» վերտառութեամբ գլխի մէջ համառօտելով (1—4 դարու սկիզբը) Ս. Թադէոս և Ս. Բարդուղիմէոս առաքեալների՝ Հայաստանեայց եկեղեցւոյ մէջ յաջորդների անուանական ցուցակը համառօտ կենսագրական տեղեկութեամբ՝ կցումէ մի աղիւսակ 12 երեսից բաղկացեալ վերտառութեամբս «Աղիւսակ ժամանակագրական յետ Քրիստոսի դար Ա.—ՃԹ»։

Հանգիստ և երկնից արքայութիւն մաղթելով հանգուցեալին համար՝ կրկնենք «Յիշատակն արդարոյ օրհնութեամբ եղիցի»։

Հնութիւնք Հայրենեաց	—	40
Հռոմվէական եկեղեցի	—	80
Հանդէս բացման Ճեմարանի	—	10
Հրահանգ քերականութեան	—	30
Հրահանգ աւագ քահանայից	—	10
Հրահանգ վասն թեմական տեսչաց	—	20
Ձայն բազմաց	1	—
Ձայնագրեալ երգոցողութիւնք Ժամագրոց	8	—
Ձայնագրեալ երգեցողութիւնք Ս. Պատարագի	3	—
Ձայնագրեալ շարական չէ-ից	60	—
Ճանապարհորդութիւն Հակատհաուզէնի	—	80
Ճաշոց	60	
Մաղթանք վասն Հայրապետի ազգիս	—	20
Մաշտոց ձեռնադրութեան քահանայից և Մ. իշխանութեան	4	—
Ցաւելուած Ժամագրոց Ձայնագրեալ	—	20
Նախակրթանք. Բ. մասն	—	45
Նոյն Գ. մասն	—	50
Ուխտանէս եպիսկոպոսի պատմագրութիւն	1	20
Ուղղագրութիւն	—	
Պատմութիւն ժողովոց Հայաստանեայց եկեղեցւոյ	—	40
Պատմութիւն Խաչակրաց	—	30
Պատմութիւն Հայոց Լեհաստանի	—	30
Պատմութիւն Հոռոմոսի Վանուց ի Շիրակ	—	20
Պատմութիւն Սեւանայ	—	20
Պատմութիւն Առաքել վարդապետի Դավրիժեցւոյ	2	—
Պատկերասէր պատկերատեաց	1	—
Ջամբռ (պատմագրութիւն Սիմէօն Կաթուղիկոսի)	1	—
Սաղմոս Դաւթի	1	—
Սկզբունք բուսաբանութեան	—	15
Վաղարշապատ	—	50
Տեղեկագիր Ճեմարանի 1881—82	—	10
Նոյն 1882—83	—	10
Փնար Մշեցւոյ և Վանեցւոյ	—	30
Օրացոյց (1887)	—	20
* Օրէնք վայելուչ կենցաղավարութեան	—	40

(*) Աստղանիշ գրեանք հրատարակուած են ուրիշ տեղեր։

20 րուբլուց աւելի գնողին եւ կանխիկ վճարողին զիջումն կը լինի 20°/₀ին (ճանապարհածախքը գնողի վրայ)։

„ԱՐԱՐԱՏ“

ԱՄՍԱԳԻՐ

Կը հրատարակուի ամիսը մի անգամ. բաժանորդագրութիւնը տարեկան է. և սկսվում է Յունվար ամսից. բաժանորդագինն է Ռուսաստանում՝ 4 րուբլի, Տաճկաստանում՝ Պարսկաստանում և Եւրոպայում՝ 5 րուբլի, Հնդկաստանում 6. ր.

Ծրագիրն է

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԱՏՄԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՑԱԿԱՆ

ԵՒ ԱԶԳԱՑԻՆ.

Արարատում կը հրատարակուեն նաև Վեհափառ Կաթուղիկոսի և Սինօդի կողմից եղած վարչական այլ և այլ հրահանգութիւնները և Սինօդի օրագրութիւններից քաղուածներ։

Արարատում կը հրատարակուեն յիշատակարաններ իբրև պատմական աղբիւր. կարտատպուեն լրագրներից իւր ուղղութեանը յարմար յօդուածները, զետեղելով ըստ բովանդակութեան։

Կը հրատարակուեն նաև լուրեր «Այլ և այլք» վերնագրով։

Հայաբնակ քաղաքներում և գաւառներում թոռթոռիկներ ցանկացողները թող դիմեն տեղական Հոգ. իշխանութեան գործակալներին կամ ուղղակի Ս. Էջմիածին. Հասցէն Эчміадзинъ. Типогр. Комитетъ—Տպարանական Ժողովին։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Տպար. Ժողովս խնդրում է Մոզդոկի, Գրիգորիօպօլսի, Թեոդոսիոյ, Խարաստւբազարի, Ս. Խաչ քաղաքի, Կոլքիս Պարուձի, Մեղրուոյ, Շարուրի, Թալինու, Գօրուոյ Լօռուոյ, Ղօշունլուի, Մելիտօպօլի գործակալներից շուտով հասցնել Արարատի ներկայ տարուոյս բաժանորդաց ցուցակն, որոց ուղարկուեցին Յունվար և Փետր. ամսագրերն անցեալ 1886 ի համաձայն։